[18] Ibid. **Malcom V.M.**, op. cit., p. 67. **Մանկունի Ն.Լ.**, op. cit., p. 586.

TABLE 6[19]

EMIGRATION OF THE ARMENIANS TO THE USA (1899–1924)



ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼՍԻ ՀԱՅՈՑ ՊԱՏՐԻԱՐՔԱՐԱՆԻ ԴԻՎԱՆԻ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ ԱՄՆ-Ի ՀԱՅ ԳԱՂԹԱԿԱՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ (XIX դ. վերջ– XX դ. սկիզբ)

ԱՎԱԳՅԱՆ Ք.

Ամփոփում

Օսմանյան կայսրության հայաբնակ շրջաններից և Արևմտյան Հայաստանից տարբեր պատճառներով ԱՄՆ մեկնած հայ գաղթականները, Կոստանդնուպոլսի Հայոց պատրիարքությունը համարելով իրենց հոգևոր, բարոյական ու գործնական միայուն պատվար, կապ են պահպանել նրա հետ:

[19] **Ավագյան Ք.**, op. cit., p. 46.

«Ամերիկա» ընդհանուր խորագրով ֆոնդում ամփոփված գործերը ներառում են ԱՄՆ-ի հայ գաղութի կյանքին վերաբերող ամերիկահայ տարբեր աշխարհիկ և հոգևոր կազմակերպությունների ու անհատների կողմից Կ.Պոլսի Հայոց պատրիարքներին գրված նամակներ, խնդրագրեր և այլն: Փաստաթղթերն իրենց ինքնատիպությամբ որոշակի պատմաճանաչողական նշանակություն ունեն:

АРХИВНЫЕ ДОКУМЕНТЫ АРМЯНСКОГО ПАТРИАРШЕСТВА КОНСТАНТИНОПОЛЯ ОБ АРМЯНСКИХ ЭМИГРАНТАХ США (конец XIX – начало XX вв.)

АВАКЯН К.

Резюме

Армяне, по тем или иным причинам эмигрировавшие в США из населенных армянами районов Османской империи и Западной Армении, поддерживали связь с Константинопольским Патриархатом, считая его своим духовным, нравственным оплотом.

Архивные документы фонда «Америка» содержат письма, петиции,касающиеся жизни армянской колонии США. Они были написаны от имени различных армянских деятелей США, светских либо духовных организаций и имеют важное историко-познавательное значение.

DEPORTATION UND VERNICHTUNG DER ARMENIER DURCH DIE OSMANISCHE ARMEE UND ANDERE BEWAFFNETE FORMATIONEN

BASSENZJAN A.

ashkhen.basentsyan@gmail.com

Die osmanischen Behörden, die im Frühjahr 1915 die Deportation der Armenier eingeleitet hatten, verfolgten das Ziel, sie zu vernichten und ihre Besitztümer zu beschlagnahmen. Das Studium der Beteiligung der osmanischen Armee und der Gendarmerie an der Ermordung vertriebener Armenier ist von großer Bedeutung. Bereits im Jahr 1919 wurde als Folge der von den Jungtürken begonnenen Gerichtsverfahren die Partei der „Einheit und Fortschritt" und ihre „Spezialorganisation" für die Durchführung der Massaker an den deportierten Armeniern schuldig gesprochen, wodurch die türkischen Militärbehörden der Verantwortung gegenüber dem türkischen Staat zu entgehen versuchten. In diesem Artikel versuchen wir zu zeigen, dass bei der Durchführung der Massaker an den deportierten Armeniern nicht nur die „Spezialorganisation", sondern auch die dem Staat unterstellten Untergruppen der Gendarmerie und Armee beteiligt waren. Es gibt zwar einige Publikationen zu diesem Thema, aber eine umfassende Studie wurde noch nicht durchgeführt.

Das am 27. Mai 1915 angenommene und am 1. Juni in Kraft getretene vorübergehende Gesetz über die Deportation legalisierte bekanntlich die Massenvernichtungspolitik gegenüber den Armeniern, wodurch dessen Ausführung dem Verteidigungsminister übertragen wurden, und die Kommandeure der Armeekorps autorisiert und verpflichtet wurden, jeglichen Widerstand der Bevölkerung durch den Einsatz von Armeekräften zu beseitigen[1]. „Es war sogar nicht nötig, den Widerstand, die Spionage oder verräterische Handlungen der Armenier zu beweisen, es genügte, dass ein einheimischer türkischer Militär oder Beamter jemanden verdächtigte und auf dieser Grundlage

[1] Տե՛ս **Սաֆրաստյան Ռ.,** Օսմանյան կայսրության 1915 թ. «Տեղահանության օրենքը», (ՊԲՀ, 2007, թիվ 2 (175), էջ 79–80):

entweder militärische Gewalt anwenden, nämlich physisch ausrotten oder deportieren konnte, was letztendlich dasselbe bedeutete“[2].

Die Deportationsbefehle wurden den Kommandeuren der Armee gegeben, diese übertrugen sie an die Valis, die Mjutasarifs und die Kajmakams, die diese, mit kleinen Ausnahmen, bereitwillig ausführten. Und die Deportationen wurden von den nach der Ankündigung der Mobilmachung gebildeten Untereinheiten der mobilen Gendarmerie durchgeführt[3]. Insbesondere nach den Aussagen von Bogazlian's Kajmakam Kemal Bey informierte dieser, nachdem er den Befehl zur Deportation der Armenier erhalten hatte, den Gendarmerie-Kommandeur darüber und danach, wurden die Listen der zu deportierenden Einwohner zusammengestellt. Die Deportation im Zentrum Kazas wurde von dem Kommandanten der Gendarmerie durchgeführt, und diejenigen, die außerhalb lebten, wurden vom Nahijes Gouverneur vertrieben[4]. Zu der Frage der militärischen Beteiligung an der Durchführung des Völkermords an den Armeniern unterscheidet V. Dadrian drei Gruppen von hochrangigen Offizieren, die den Schwerpunkt der „erfolgreichen“ Durchführung ausmachten: Die erste war die Planungs- und Logistikgruppe unter der Leitung von Oberst Sejfi, zweites Hauptquartiers des Generalstabs, die zweite Gruppe umfasste verschiedene Armeeeinheiten, Kommandeure verschiedener Fronten, die dem Oberbefehlshaber der in dem Gebiet der armenischen Provinzen tätigen Dritten Armee, Mahmud Kamil Pascha, unterstellt waren, und zur dritten Gruppe gehörten aus den Gefängnissen entlassene Kriminelle[5]. Diese Gruppen haben durch ihre Tätigkeit die Umsetzung der Beschlüssen zum Völkermord sichergestellt.

Obwohl die Ermordung von Vertriebenen den Einheiten der „Spezialorganisation“ vorbehalten war, konnten sie nicht allein die Vernichtung

---

[2] **Մարուքյան Ա.,** Հայոց ցեղասպանության ժխտողականության թուրքական հայեցակարգի հիմնական բաղադրիչները, «Հայոց ցեղասպանության ժխտողականությունը նոր օսմանականության գաղափարախոսության համատեքստում», գիտաժողովի նյութեր, Ե., 2016, էջ 37:

[3] Über die Deportations- und Vernichtungstelegramme durch Kommandeure des Armeekorps und der Gendarmerie siehe: **Akçam T.,** A shameful Act: the Armenian Genocide and the Question of Turkish Responsibility, New York, 2006, p. 164, 168; **Dadrian V.N.,** Documentation of the Armenian Genocide in Turkish Sources, Jerusalem, 1991, p. 103.

[4] **Անումյան Մ.,** Երիտթուրքերի 1919–1921 թթ. դատավարությունների վավերագրերը ըստ օսմանյան մամուլի, Ե., 2011, էջ 173:

[5] Siehe **Dadrian V.N.,** Ermeni Soykırımında Kurumsal Roller, İstanbul, 2007, S. 44–49.

der gesamten Bevölkerung durchführen. Auch die Gendarmerie und die Armee unterstützten sie während des Massakers. Deutschen Dokumenten zufolge haben die Gendarmen selbst gestanden, dass sie im Jahre 1915 Erzincans Bevölkerung mit dem Bischof an der Spitze an den Euphrat getrieben und sie dort ertränkt haben. An beiden Uferseiten haben die Kurden alle kontrolliert und diejenigen erschossen, die gewagt hatten, den Verfolgern zu entkommen. Dem zu einem besonderen Zweck in die Provinzen von Westarmenien gereistem Paul Vaytz und seinen Begleitern hatten die Gendarmen die Orte gezeigt, an denen die Henker im Winter die fast nackten Opfer in den Strom getrieben hatten. Die Gruppe beobachtete auch die nahe gelegenen Kasernen, in denen 1500 Armenier zur gleichen Zeit ermordet wurden. Einer der Gendarmen gab die Zahl der Menschen an, die er mit seinen eigenen Händen tötete: 50, und ein anderer 27[6]. Nach einem anderen Bericht hat man von den aus Mudurga Deportierten die Männer von Frauen getrennt und sie nicht durch sichere Landstraßen, sondern durch Berge geführt; zwei Tage lang bekamen sie keinen Tropfen Wasser, obwohl es Wasser gab, die Gendarme haben verdurstete halbtote Frauen und Kinder weiter getrieben. Jeden Tag starben 30–40 Frauen und Kinder erschöpft auf der Straße, und einige von ihnen wurden von sie begleitenden Gendarmen erschossen[7]. Den österreichisch-ungarischen Dokumenten zufolge wurden im Jahre 1915 fast 60 von Gendarmen in Koulak-Kaja geplünderte und dann getötete Armenier zwischen Kerasunt und Ordou nackt ins Meer geworfen[8]. Laut J. Lepsius wurden die Männer während der Deportationen hauptsächlich von begleitenden Gendarmen ermordet[9]. Der arabische Zeuge Fayez al-Hussein schrieb in seinen Erinnerungen, dass die Vertriebenen ähnlich wie die Soldaten in Reihen gingen. Einige Gendarmen gingen vor und hinter ihnen. Jedes Mal, wenn eine Frau zurückblieb, schlug ein Gendarm sie, so dass sie zu Boden fiel. Dann stand sie erschrocken auf und erreichte die anderen. Wenn die Frau aber trotzdem nicht gehen konnte, lies

[6] Геноцид армян: официальные документы из германских архивов, публикуемые впервые. Вольфганг и Зигрид Густы (составители сборника документов). Под редакцией, с предисловием и примечаниями С.С. Степаняна, Е., 2005, с. 431.

[7] Ebenda, S. 202.

[8] Österreich-Armenien 1872–1936, Faksimilesammlung diplomatischer Aktenstücke, Bd. VI, 1914–1915, Wien, 1995, S. 4725.

[9] Գերմանիան և Հայաստանը 1914–1918, դիվանագիտական փաստաթղթերի ժողովածու, հ. I, հրատարակությունը և ներածությունը՝ դոկտոր Յոհաննես Լեփսիուսի, Ե., 2006, էջ 64:

man sie entweder ohne Hilfe und Trost allein mit wilden Tieren an einem wüsten Ort zurück, oder ein Gendarm erschoss sie[10]. Doktor Aziz Beck erzählte F. al-Hussein, dass er die Exekution beobachten durfte. Der Arzt hatte vier Metzger gesehen, jeder mit einem langen Messer. Die Gendarmen teilten die Armenier zuerst in Gruppen mit je 10 Personen auf und schickten sie nacheinander zum Metzger. Der Metzger sagte dem Armenier: „Strecke deinen Hals!“. Er streckte den Hals und wurde geköpft[11]. Auf Befehl von Cemal Azmi Bey wurden armenische Männer von Gendarmen auf dem Weg nach Kumkale getötet, einige wurden erschossen und einige ins Meer geworfen[12]. Die in Mardin zur Deportation verurteilten 447 christlichen hochrangigen Männer, darunter katholische, apostolische und protestantische Armenier sowie andere Christen, wurden um 1 Uhr nachts in 11 Gruppen, begleitet von 100 Soldaten der Miliz, aus der Stadt geführt. Und die Nachricht über ihr Schicksal verbreitete sich blitzschnell[13]. Zwei Stunden von Trapezunt entfernt warteten andere Gendarmen auf die Vertriebenen, die sie dann töteten und ins Meer warfen. Unter den Vertriebenen war der am Kopf verletzter Vartan, der zum am Ufer liegende griechische Krankenhaus von Trapezunt geschwommen war, das Schicksal der Toten gemeldet hatte und selbst starb[14]. Der Journalist der Zeitung „World“, der den Gruppen von in den Süden der arabischen Halbinsel vertriebenen Armeniern folgte, bezeugte auch die Organisierung des Massakers an Armeniern durch Polizeisoldaten[15]. Der deutsche Konsul in Aleppo, Rößler, schrieb an den Reichskanzler Bethman Hollweg, dass Lehrer, Geistliche und Intellektuelle getrennt von den Frauen und Kindern deportiert wurden. Sogar gegen 1 Pfund gab man den Armen keinen Tropfen Wasser. In der Nähe der Kanalisation von Marash wurden Tausende von Menschen platziert, und obwohl Aksu 5 Minuten entfernt war, zwang man sie, diese Abwässer zu trinken, woran sie starben. Die Gruppe von 500–1000

---

[10] **Гуайта Д.** Шейх Файез эль-Гусейн о геноциде армян, М., 2007, с. 104.

[11] **Ebenda,** S. 173.

[12] **Աքչամ Թ.,** Երիտթուրքերի գործած ոճիրը մարդկության դեմ. Հայոց ցեղասպանությունը և էթնիկ զտումները Օսմանյան կայսրությունում, Ե., 2015, էջ 385:

[13] **Hesemann M.,** Völkermord an den Armeniern (mit unveröffentlichten Dokumenten aus dem Geheimarchiv des Vatikans über das größte Verbrechen des Ersten Weltkriegs), München, 2015, S. 205.

[14] Германские источники о геноциде армян, сборник документов и материалов, т. I, под редакцией С.С. Степаняна, Е., 1991, с. 239–240.

[15] Մշակ, Թիֆլիս, № 275, 1915, դեկտեմբերի 12:

Menschen musste 100–200 Lire pro Nacht sammeln, wenn sie bis zum nächsten Morgen am Leben bleiben wollten. So wurden sie von den brutalen Soldaten bedroht. Es war ein „brillant“ organisierter Feldzug von Raub und Tötung durch Polizei und Soldaten[16].

Nach einigen Quellen werden die Organisation der Deportation von Armeniern und das Abschlachten der Vertriebenen nur der „Spezialorganisation“ zugeschrieben. Der deutsche Offizier Karl Schimme schrieb in seinem Bericht, dass er während seiner Reise nach Trapezunt Leichen auf den Straßen sah und Banditen, die auf die weitere Massaker warteten[17]. Und am 18. Juni 1915 berichtete der Vizekonsul Scheubner-Richter, dass in Kemah bei Erzincan, 12 Stunden vom Hauptquartier der Dritten Armee entfernt, die Banditen ungefähr 20–25 Tausend Menschen vom 10. bis 14. Juni ermordet hatten[18]. Haykaz Ghazaryan hat in seine Studie „Der Völkermörder- Türke“ Kopien geheimer Sitzungsentscheidungen der „Spezialorganisation“ aufgenommen, in denen angegeben ist, dass auf Befehl der Exekutivgewalt die Aufgabe der blutrünstigen Mörder der „Spezialorganisation“ Tötung, Raub und Vergewaltigung von Armeniern war. Ein detaillierter Aktionsplan wurde zusammen mit Talaat ausgearbeitet, die auszurottenden Städte und Siedlungen der Armenier wurden in der Reihenfolge klassifiziert; das Territorium des Reiches war in Regionen unterteilt, und es sollten Banden im erforderlichen Umfang auf die Straßen an bestimmte Orte geschickt werden, wo sie auf die Ankunft von Karawanen aus vertriebenen Armeniern warten sollten. Die städtischen Behörden wurden beauftragt, Karawanen mit Polizei und Gendarmen zu begleiten, um sie unter Kontrolle zu halten und dann den Banditen zu übergeben. Es wurde auch beschlossen, die Toten in die vorher vorbereiteten Gräber und Gruben zu werfen und sie zuzuschütten, um die öffentliche Gesundheit aufrechtzuerhalten und über die Vergewaltigung von Frauen und Mädchen zu schweigen[19]. Die Umsetzung dieses Programms wird durch folgende Tatsache bestätigt: Am Nachmittag des 22. August 1915 erreichte eine 700-köpfige Karawane, vertrieben aus Orta-Köj, Haci-Köj und Halaca, den Tepe Khan (Angora Vilayet). Die Gendarmen haben gefesselte Männer in getrennten Gruppen auf

[16] Siehe Геноцид армян: официальные документы из германских архивов, публикуемые впервые, с. 350.

[17] **Akçam T.,** A Shameful Act: the Armenian Genocide and the Question of Turkish Responsibility, p. 158.

[18] **Ebenda.**

[19] **Ղազարեան Հ.Գ.,** Ցեղասպան թուրքը, Պէյրութ, 1968, էջ 37:

eines der nahe gelegenen Felder getrieben, dann hat man den Gruppen von Mördern in der Nachbarschaft durch Schüsse Signale gegeben. Alle Männer und Jungen über 12 Jahren wurden getötet, indem man sie mit Holzstücken, Steinen, Dolchen, Schwertern und Messern schlug[20]. Dies bedeutet jedoch nicht, dass die Massaker der Vertriebenen nur von den Raubmördern der „Spezialorganisation“ ausgeführt wurden. Wie bereits erwähnt, nahmen die Gendarmen auch an der Tötung teil.

Es sollte noch der wichtige Punkt berücksichtigt werden, dass die der Armee unmittelbar unterstellten Truppeneinheiten der „Spezialorganisation“ in das Massaker verwickelt waren. Im August 1914 standen die „Stämme“ der Kurden, die die ittihatischen Nachfolger der berüchtigten „Hamidiye“-Regimenter der hamidischen Periode waren, unter dem Kommando der Dritten Armee. Die Art und der Ort des Dienstes dieser Stammestruppeneinheiten sollte vom Kommandanten der oben erwähnten Armee bestimmt werden, sie sollten so handeln, wie es der Kommandant der Dritten Armee befahl. Diese aus den Kurden bestehenden Einheiten, die die Hauptinitiatoren der Vernichtung von Armeniern in den östlichen Vilayets waren, wurden in einigen Fällen von den Offizieren der „Spezialorganisation“ geführt[21].

Für die Organisation der Massaker an den aus Mesopotamien deportierten Armeniern, wurden auch vorübergehend spezielle Truppeneinheiten erstellt. Zuerst hatten die Jungtürken gehofft, dass, wenn sie die Vertriebenen in den Konzentrationslagern lassen, die Zahl der Sterbenden unter ihnen stark zunehmen würde. Obwohl jeden Tag 300–500 Menschen starben, schien es den Jungtürken nicht zu genügen. Aus diesem Grund wurde in der „Spezialorganisation“ eine Entscheidung getroffen, spezielle Truppeneinheiten zu schaffen. Um die Kosten solcher Einheiten zu reduzieren, wurde es beschlossen, dass sie aus den Bewohnern der nahe gelegenen muslimischen Dörfer gebildet werden, besonders von den diese Orte bewohnenden Tschetschenen[22]. Das Massaker an den in

---

[20] Հայոց ցեղասպանությունը Գերմանիայի դիվանագետների հաղորդագրություններում (1915–1918 թթ.), ըստ կայսերական Գերմանիայի Արտաքին գործերի նախարարության քաղաքական արխիվի, Ե., 2004, № 27, էջ 86:

[21] **Աքչամ Թ.,** op. cit., S. 515, siehe auch: **Авакян А.** Геноцид армян: механизмы принятия и исполнения решений, Е., 2013, с. 113; Германские источники о геноциде армян, сборник документов и материалов, т. I, с. 219.

[22] **Авакян А.** Черкесский фактор в Османской империи и Турции (вторая половина XIX – первая четверть XX вв.), Е., 2001, с. 239.

syrische Wüste deportierten Armeniern begann im Frühling 1916, in Ras-ul-Ain, wo etwa 70.000 Menschen getötet wurden. Das Massaker wurde von einer speziellen Bande von Tschetschenen aus den umliegenden Dörfern unter der Leitung von Muchtar Arslan Bey durchgeführt[23]. Und die das Massaker von Ras-ul-Ain durchgeführenden Tschetschenen hatte der Gouverneur Zecki Bey nach Deir el-Zor gerufen, weil er dort mehr Kräfte und Ressourcen brauchte, um das Massaker zu durchzuführen. Danach rief Zecki, wiederum wegen der Unzulänglichkeit der Kräfte, die benachbarten arabischen Ashireten (ein Nomadenstamm) zur Hilfe, indem er ihnen die Kleidung der Opfer versprach. Sie töteten die meisten Vertriebenen mit eigenen Händen[24]. Laut dem kodierten Telegramm des Innenministers Talaat, welches an den Komandanten der Vierten Armee gerichtet war, bat der Provinzgouverneur Zecki Istanbul darum, zusätzliche Gendarmen von der Vierten Armee nach Deir el-Zor zu schicken, weil zusätzliche Arbeitskräfte für die Tötungen benötigt werden könnten. Zwei Wochen später bat er die sechste Armee auch um dreihundert Soldaten[25]. Zecki tötete mehr als 200.000 Armenier in Deir el-Zor[26].

Dieses verschlüsselte Telegramm zeigt, dass die Deportation der Armenier nicht nur von den Einheiten der „Spezialorganisation“, sondern auch von den dem Staat unterstellten Gendarmerie- und Armeeeinheiten durchgeführt wurde. In einem sich im Kriegszustand befindenden Land, in dem die Streitkräfte der Armee an der Front kämpfen mussten, griffen die türkischen Behörden wegen der unzureichenden Zahl von Banden in der Tat zu einem extremen Schritt: Die für die Front bestimmten Armeetruppen wurden in die Standorte der vertriebenen Armenier gesendet, um das Massaker zu vollenden.

Aufgrund der Tatsache, dass die Tschetschenen in Deir el-Zor waren, blieben in Ras-ul-Ain noch ein paar hundert armenische Familien am Leben. Nach Deir el-Zor kehrten die tschetschenischen Einheiten nach Ras-ul-Ain zurück. Sie versammelten dort die verbliebenen armenischen Familien und trieben sie mit kleinen, gerade angekommenen Karawanen von Vertriebenen nach Shidadie, um sie dort mit den letzten Überresten von Armeniern aus Deir el-Zor zu vernichten. Laut dem deutschen Konsul in Aleppo, Rößler, hatte die tscherkessische Bande die

---

[23] **Ebenda,** S. 239–240.
[24] **Ebenda,** S. 241.
[25] **Աքչամ Թ.,** op. cit., S. 347–348.
[26] **Авакян А.,** Черкесский фактор, с. 240.

Karawane umgeben, sie geplündert, dann weggetrieben und nach 3 Stunden angehalten. Die Tscherkessen stürzten erneut mit Äxten, Schwertern und Dolchen auf ihre Opfer, bis das Blut in Strömen floss und die ganze Ebene mit ihren verstümmelten Leichen bedeckt war[27]. Das nächste Massaker fand in Mesken statt, wo nach türkischen Angaben 55.000 Menschen begraben waren[28].

Die Deportation und die Vernichtung der Armenier durch Gendarmerie und andere bewaffnete Einheiten wird auch durch die Dokumente von Gerichtsverfahren gegen Jungtürken in den osmanischen Militärbehörden bewiesen. Bei dem Gerichtsverfahren über die Deportation und Massaker an Armeniern am 1. April 1919 sagte der Zeuge Nevaret aus, dass die zum „Schutz" der Karawanen der Armenier eingesetzten 50 begleitenden Gendarmen Tausende von gelähmten und erschöpften Menschen getötet und Kinder in den Säcken in den Flüssen ertränkt hatten[29]. Nach dem Urteil vom 8. April 1919 haben die Gendarmen die vertriebenen Karawanen begleitet, um sie zu vernichten. Daran kann kein Zweifel bestehen[30]. Im Prozess gegen die Mitglieder der Partei „Einheit und Fortschritt", die im April und im Mai 1919 stattfand, wird darauf hingewiesen, dass die Banditen der „Spezialorganisation" die Vernichtung der deportierten Armenier ausgeführt haben[31]. Im Josgat Urteil wird auch erwähnt, dass mithilfe von Gendarmen die die Deportationskarawanen überwachenden Einheiten, die aus gewöhnlichen Kriminellen und Gesindel bestanden, ungeschützte Armenier aus der Stadt getrieben haben, um sie angeblich zu deportieren. Als sie jedoch die Stadt verließen, wurden sie von Banden angegriffen, die ihre Besitztümer stahlen und sie töteten[32].

Der Kommandant der örtlichen Garnison,Avni Pascha, hatte bei der 16. Sitzung des Prozesses in Trapezunt (5. Mai 1919) darauf bestanden, dass er vom Militärminister den Befehl bekommen habe, sich nicht in die inneren

[27] **Ebenda,** S. 241–242.

[28] **Vierbücher H.,** What the German Imperial Government concealed from its Subjects: Armenia 1915: The Slaughter of a civilized People at the Hands of the Turks, Arlington, 2006, p. 60; siehe auch: Геноцид армян: официальные документы из германских архивов, публикуемые впервые, с. 348.

[29] **Անումյան Մ.,** op. cit., S. 131.

[30] **Dadrian V.N.,** Documentation of the Armenian Genocide in Turkish Sources, p. 104.

[31] **Անումյան Մ.,** op. cit., S. 71.

[32] **Akçam T.,** A shameful Act: the Armenian Genocide and the Question of Turkish Responsibility, p. 158.

Angelegenheiten des Gouverneurs einzumischen, und hatte hinzugefügt, dass die von bewaffneten Banditen durchgeführten Massaker außerhalb der Stadt stattgefunden haben[33]. Beim Mamuretulaziz-Gerichtsverfahren am 2. August 1919 sagte der ehemalige Gouverneur von Erzurum Tahsin aus, dass er während der Deportation der Armenier in Erzurum gewesen sei, und die Menschenkolonnen von den im Auftrag der „Spezialorganisation" Versammelten massakriert wurden[34]. Der Befehlshaber des Erzurum-Regiments, Kommandant Adil Bey, bemerkte auch, dass Armenier von den Mitgliedern der „Spezialorganisation" ermordet wurden, und dass er darüber von den durchgeführten Untersuchungen und der erhaltenen schriftlichen Antwort des Kommandanten der bayburder Gendarmerie erfahren habe[35]. Es ist durchaus verständlich, dass während der Prozesse versucht wurde, die gesamte Schuld der begangenen Verbrechen der der jungtürkischen Ittihat-Partei untergeordneten „Spezialorganisation" zuzuweisen. Auf diese Weise versuchten die türkischen Militärtribunale, die Parteimitglieder als Organisator des Verbrechens zu verurteilen, und die Verantwortung auf staatlicher Ebene für die Umsetzung des Genozids zu vermeiden, was schwerwiegende Folgen für den türkischen Staat gehabt hätte.

Nach Avni Paschas schriftlichen Aussagen während des Prozesses in Trapezunt wurde von den aus dem Kaukasus nach Trapezunt emigrierten christlichen und muslimischen Georgiern ein spezielles Regiment „Georgische Legion" gebildet, das die Karawanen der Armenier auf den Straßen angriffen[36]. Diese aus 700 Menschen bestehende militärische Einheit, die vom deutschen Hauptquartier finanziert wurde, stand unter der Aufsicht des deutschen Generals Mozel in Trapezunt. Es sollte mit türkischen Kräften kooperieren, wenn die osmanische Armee in Georgien einträfe. Bis dahin sollte die Legion in Trapezunt warten[37]. Tatsächlich hatte die „Georgische Legion" neben ihrem Hauptzweck auch an Angriffen auf Vertriebene teilgenommen. Die Tatsache, dass die Formationen der unter das Kommando der Armee gestellten „Spezialorganisation" an den Massakern vertriebener Armenier beteiligt waren, lässt Zweifel an ihrem Hauptzweck aufkommen: wurden diese Einheiten berufen, um den Vormarsch der

[33] **Ebenda,** S. 171.

[34] **Աքչամ Թ.,** op. cit., S. 508–510:

[35] Ebenda, S. 511.

[36] **Անումյան Մ.,** op. cit., S. 134:

[37] Տրապիզոնի հայոց տեղահանութիւնը, պատմեց՝ Ղազար Մակունց, գրի առեց՝ Հ. Կոսոյեան, Թեհրան, 1963, էջ 74:

russischen Truppen zu verhindern oder die Massaker an den Armeniern auszuführen?

Wie bereits erwähnt, war die osmanische Armee zusammen mit den Gendarmen und der „Spezialorganisation“ an der Durchführung des Massakers der vertriebenen Armenier beteiligt. Aus einem Tagebuch eines türkischen Arztes, der von den Russen gefangen genommen wurde, stellte man fest, dass 2000 Armenier, umgeben von Wachen, in einem verlassenen Gebiet bei Bitlis saßen. Sie „warteten bis sie an der Reihe waren“, weil lokale Polizeikräfte nicht genug waren, um sie alle zusammen zu ermorden. Die Truppen der 36. Division beteiligten sich ebenfalls am Massaker von Bitlis[38]. Ein armenischer Kriegsgefangener von der Alliierten Armee trat mit seinem Bruder als Muslime der türkischen Armee bei und wurde nach Enkuri geschickt. Er hat überall unterwegs Reservisten getroffen, die Armenier töteten[39]. Die Krankenschwestern vom Roten Kreuz in Erzurum, Tora von Vedel-Jarlsberg und Eva Elvers, haben während des Tehlerian - Prozesses das Folgende bezeugt: „Am 8., 9. und 10. Juni verließen neue KarawanenErzincan, 20-25.000 Menschen. Es wurde schnell klar, dass die Kurden die Vertriebenen angegriffen, geplündert und gefoltert haben. Am 11. Juni wurden regelmäßig Truppen entsandt, um die Kurden zu „bestrafen“. Stattdessen zerstörten die Truppen die unbewaffnete Karawane, die größtenteils aus Frauen und Kindern bestand. Aus den Worten der türkischen Soldaten, die an dem Vorfall teilnahmen, erfuhren wir, dass sie sie persönlich erschossen haben, weil der Befehl erteilt wurde. Die Soldaten sagten ihnen, dass sie vier Stunden brauchten, um sie zu vernichten. Und dann brachten sie Ochsenkarren, um die Leichen zum Fluss zu tragen“[40].

Außerdem nahmen nicht nur einfache türkische Soldaten, sondern auch Offiziere an den Massakern der Vertriebenen teil. In seinem vertraulichen Bericht an den deutschen Botschafter in Konstantinopel bemerkte auch Scheubner-Richter: Türkische Offiziere waren in das Massaker an den Yerznka-Tal-Bewohnern involviert, als sie sie durch die Kemakh-Schlucht gingen[41]. Am frühen Morgen des 12. Juni hatte der Apotheker Gehlsen gesehen, der fließend Türkisch sprach, wie

---

[38] Հայաստան, № 55, 1915, սեպտեմբերի 19:

[39] Արմէնիա, № 14, 1915, նոյեմբերի 3:

[40] Германские источники о геноциде армян, сборник документов и материалов, т. I, с. 249–250.

[41] Հայոց ցեղասպանությունը Գերմանիայի դիվանագետների հաղորդագրություննե-րում (1915–1918 թթ.), № 17, էջ 55:

die 20-köpfige Bande weggegangen war. Er fragte einen bekannten Soldaten nach dem Zweck des Feldzuges. Der Letztere erklärte, dass sie in die Kemakh-Schlucht gehen, um die vertriebenen Armenier anzugreifen[42]. Am 9. September 1915 telegrafierte der Generalkonsul des Kaiserlichen Konsulats, Holstein von Mosul, dass laut anderen Quellen durch die Angaben türkischer Soldaten, die auf dem Wege von Jezire nach Bagdad über Mosul passiert sind, ungefähr eine Woche zuvor das kurdische Gesindel von Jezire mit Tolerierung lokaler Behörden und militärischer Beteiligung die gesamte christliche Bevölkerung abschlachteten[43]. Dem Bericht des Oberleutnants Stange an die deutsche Militärmission in Konstantinopel zufolge ist unbestreitbar, dass die Armenier von Erzurum auf dem Territorium von Mamachatun (Derjan) von den sogenannten Chetenen, Ashiraten und ähnlichem Pöbel fast ohne Ausnahme ausgerottet wurden, und das mit der Erlaubnis der Militärwachen, sogar mit ihrer Unterstützung. Vali hatte diese Tatsachen dem deutschen Konsul gestanden, und der letztere befragte über die Einzelheiten einen alten Armenier, der verletzt dem Massaker entkommen war. Der Mitarbeiter des deutschen Konsulats, Kriegsfreiwilliger Shlime, hatte eine große Anzahl von Leichen gesehen[44].

In einem sich im Kriegszustand befindenden Land müssen die Offiziere und Soldaten normalerweise an der Front kämpfen und ihre Rolle bei der Organisation des Völkermordes sollte streng begrenzt sein, nicht aber in diesem Fall. Hochrangige Offiziere waren nicht nur Befehlausführende, sondern spielten eine bedeutende Rolle bei den Genozidbeschlüssen. Hervorzuheben sind insbesondere die fünf Mitglieder der die Vernichtung der Armenier vorbereitenden Geheimversammlung im Winter 1915, unter ihnen Oberst Sejfi, der Leiter der zweiten Einheit des osmanischen Generalstabs war, Ismail Jenpolad, ein prominenter Offizier und der nationale Sicherheitsverantwortliche des Kaiserreichs. Die anderen beiden, Nazem und Shakir, waren Vertreter der Militärmedizin. Und Militärärzte waren während des Völkermords als Berater tätig[45].

---

[42] Геноцид армян: официальные документы из германских архивов, с. 122, 190.

[43] Գերմանիան և Հայաստանը 1914–1918, դիվանագիտական փաստաթղթերի ժողովածու, h. I, № 167, էջ 288:

[44] Геноцид армян: официальные документы, с. 189.

[45] **Dadrian V.N.,** Ermeni Soykırımında Kurumsal Roller, S. 44.

Die deutschen Konsulate von Erzurum, Mosul, Aleppo, Adana und Trapezunt haben sich mit den Übergriffen und Gesetzlosigkeiten der türkischen Behörden in dreibändigen Dokumenten und Berichten auseinandergesetzt, in denen durch nachgewiesene und bewiesene Beispiele als bestätigt gilt, dass türkische Polizisten, Gendarmen und Soldaten teilweise durch die Anordnung ihrer Vorgesetzten, teilweise freiwillig an der Tötung der Vertriebenen teilgenommen haben[46].

Trotz der weit verbreiteten Ansicht, dass die Vernichtung der deportierten Armenier durch die „Spezialorganisation“ durchgeführt wurde, haben die Gendarmerie und die Armeeeinheiten an diesem Vorgang teilgenommen, die wegen der fehlenden Gewalt der „Spezialorganisation“ an geeignete Orte geschickt wurden, um das Massaker zu beenden. Inzwischen waren die Einheiten der „Spezialorganisation”, die unter das Kommando der Dritten Armee gestellt wurden, auch an dem Massaker der deportierten Armenier beteiligt. Die Teilnahme der dem Staat unterstellten Strukturen, wie der Gendarmerie und der Armeeeinheiten, an der Vernichtung der deportierten Armenier bestätigt erneut den Sachverhalt, dass die ganze Verantwortung für den Genozid an den Armeniern dem türkischen Staat zukommt.

ՀԱՅԵՐԻ ՏԵՂԱՀԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՈՉՆՉԱՑՈՒՄԸ ՕՍՄԱՆՅԱՆ ԲԱՆԱԿԻ ԵՎ ԱՅԼ ԶԻՆՎԱԾ ԿԱԶՄԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ

ԲԱՍԵՆՑՅԱՆ Ա.

Ամփոփում

Տեղահանությունը, որի իրական նպատակը հայերի ոչնչացումն էր, իրականացվեց օսմանյան Հատուկ կազմակերպության, ժանդարմերիայի և բանակի ստորաբաժանումների կողմից: Թեև պետական պատասխանատվությունից խուսափելու համար երիտթուրքերի դատավարությունների արդյունքում Հայոց ցեղասպանության իրագործման պատասխանատու ճանաչվեցին միայն «Միություն և առաջադիմություն» կուսակցությունը և Հատուկ կազմակերպությունը, սակայն, ինչպես պարզվեց, վերջինիս ուժերի բավարար չլինելու պատճա-

[46] Siehe Геноцид армян: официальные документы, с. 320–321.

ռով տեղահանված հայերի կոտորածին մասնակցել էին նաև ժանդարմերիայի և բանակի ստորաբաժանումները: Այս իրողությունը հաշվի առնելով՝ պետք է պնդել, որ Հայոց ցեղասպանության իրականացման համար պատասխանատու է օսմանյան պետությունը:

ДЕПОРТАЦИЯ И ИСТРЕБЛЕНИЕ АРМЯН ОСМАНСКОЙ АРМИЕЙ И ДРУГИМИ ВООРУЖЕННЫМИ ФОРМИРОВАНИЯМИ

БАСЕНЦЯН А.

Резюме

Депортация, предпринятая с целью истребления армян, осуществлялась не только с помощью подразделений «Особой организации», но и жандармерии и подразделений османской армии. Хотя и судебным приговором младотурок, во избежание государственной ответственности в осуществлении геноцида армян, виновными были признаны лишь партия «Единение и прогресс» и «Особая организация», но факты свидетельствуют о том, что из-за нехватки людских ресурсов для реализации этих планов османскими властями были привлечены также жандармы и солдаты. Сказанное еще раз доказывает, что ответственность за геноцид армян лежит на турецком государстве.

ՎՐԱՑ ԵԿԵՂԵՑՈՒ ԻՆՔՆԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՏԱՏՈՒՄԸ 1917 ԹՎԱԿԱՆԻՆ

Թամարյան Ջ., Ղազարյան Գ.
jenni.8282@mail.ru, gayane.ghazaryan.1992@mail.ru

1917 թ. ռուսաստանյան հեղափոխությունների արդյունքում փոխվեց ոչ միայն Ռուսաստանի պատմության ընթացքը, այլև քաղաքական զարգացման նոր ուղիներ նախանշվեցին Անդրկովկասի, հատկապես՝ Վրաստանի համար:

Դեռևս 1905–1907 թթ. ռուսական առաջին բուրժուադեմոկրատական հեղափոխության ժամանակներից վրացիներն անընդհատ պայքար էին մղում Վրաց եկեղեցու ինքնավարության համար[1]: Այդ նախաձեռնության մեծագույն ջատագով Կյուրոն II-ը[2] հասավ նրան, որ 1905 թ. Թիֆլիսում էկզարխ նշանակված Ալեքսի I-ի թույլտվությամբ գումարվեց վրաց հոգևորականության համագումար: Սակայն համագումարը որևէ էական արդյունք չտվեց: Նոր էկզարխ Նիկոլայի նշանակումը ավելի խորացրեց հակամարտությունը էկզարխաթի և վրաց հոգևորականության միջև, ինչի վկայությունն էր նույն թվականի դեկտեմբերի 18-ին Թիֆլիսում կայացած վրաց հոգևոր պատգամավորների ընդհանուր ժողովը: Արդյունքում ընդունվեց «Վրաց եկեղեցու վերակա-

[1] Մինչև 1801 թ. Ռուսական կայսրության կազմի մեջ Վրաստանի մտնելը Վրաց եկեղեցին ունեցել է ներքին ինքնավարություն: 1811 թ. Վրաստանում վերացվեց կաթողիկոսական համակարգը, իսկ 1818 թ. ստեղծվեց վրացական էկզարխաթը՝ 4 թեմերից (1. Վրացական, 2. Իմերեթիայի, 3. Սուխումի, 4. Գուրիա-Մեգրելիայի, իսկ 1885 թվականից Վլադիկավկազի)՝ բաղկացած կրոնական-վարչատարածքային միավորը:

[2] Կյուրոն II (աշխարհիկ անունը Սաձագելով-Լիախվել-Իբերացի Գեորգի Սաձագլիշվիլի) եպիսկոպոս, Ամենայն Վրաց կաթողիկոս-պատրիարք, հասարակական գործիչ, XIX դարի 80–90-ական թթ. վրաց մտավորականության առավել հայտնի ներկայացուցիչներից մեկը (1855–1918 թթ.): Նրա գործունեությունը մեծապես նպաստել է վրաց հասարակության մեջ գրագիտության տարածմանը: 1905–1907 թթ. ռուսական հեղափոխության տարիներին եղել է Վրաց եկեղեցու ինքնավարության վերականգնման ջատագովը: Նրա քարոզչության արդյունքում 1905 թ. անցկացվեց եկեղեցական հանդիպում, որտեղ էլ վրաց հոգևորականները բարձրացրեցին Վրաց ինքնավար (ավտոկեֆալ) եկեղեցու հարցը: 1917 թ. նշանակվել է Ամենայն Վրաց պատրիարք-կաթողիկոս: Տե՛ս **ი. იმედაშვილი**, კირიონის გაპარტახება და მკვლელობა, გაზეთი «კომუნისტი», 1990 წ.2 სექტემბერი.

ռուցման մասին» փաստաթուղթը, որը եկեղեցու ինքնավարության վերականգնման համար հիմք հանդիսացավ[3]:

Այս պայքարը շարունակվեց հեղափոխության ողջ ընթացքում: Ժողովրդին այդ գործընթացի մեջ ներգրավելու և գաղափարապես զինելու համար վրաց հոգևորականների նախաձեռնությամբ բազմաթիվ գրքեր էին տպագրվում: Իսկ 1907 թ. պայքարը նոր փուլ մտավ, Անգլիայում գործող վրացի անարխիստ Վառլամ Չերքեզիշվիլու և վրաց հոգևորականների համատեղ ջանքերով որոշում կայացվեց դիմել Կ. Պոլսի Տիեզերական պատրիարքին, որ մեծ ոգևորություն առաջացրեց վրաց ժողովրդի մեջ[4]: Սակայն հեղափոխությունը կայսրությունում մարելուց հետո վրաց եկեղեցու ինքնավարության վերականգման հարցը օրակարգից դուրս մղվեց[5]:

Առաջին համաշխարհային պատերազմի ընթացքում Ռուսական կայսրությունում տեղի ունեցող քաղաքական զարգացումներին զուգընթաց՝ ինքնավարության համար պայքարը նոր թափ առավ: 1914–1916 թթ. թեմական խորհուրդները համախմբվեցին ինքնավարության հարցի շուրջ: Վրաց եկեղեցու ազատագրումը ենթադրում էր Վրաստանի ազատագրում, որն էլ, ըստ վրաց հասարակության, պայմանավորված էր Ռուսական կայսրության փլուզմամբ: Այդ իրադարձությունների արդյունքում Սրբազան Սինոդը ստիպված էր ընդունել ինքնավարության շարժումը զսպող երեք կարևորագույն միջոցառում.

1. Կովկասում հիմնել մետրոպոլիտություն, որը պետք է խաթարեր Վրաց եկեղեցու ինքնավարության գործընթացը,

2. իրագործել Սուխումի թեմի նախագիծը, ըստ որի, Վրաց ինքնավար եկեղեցուց տարանջատվելու էր Աբխազիայի շրջանը, այն բաժանվելու էր վրացիների և ոչ վրացիների միջև (ռուսներ, աբխազներ, մեգրելներ, սվաններ և հույներ) և կոչվելու էր «Սև ծովի թեմ»,

3. փակել վրաց-իմերեթական սինոդական գրասենյակը (Վրաց ինքնավար եկեղեցին պետք է ներկայացված լիներ ճիշտ և ճիշտ այս գրասենյակով:

---

[3] საქართველოს ეკლესიის ავტოკეფალიის გაუქმება, 2012 წელი.

[4] Չնայած առաջացած ոգևորությանը, Տիեզերական պատրիարքը երկար ժամանակ ձգձգում էր դիմումի պատասխանը: Միայն 1914 թ., երբ Ստամբուլում էին գտնվում ինքնավարության վերականգնման ջատագովներ Ալ. Ցագարելին և Ն. Դուռնովը, Կ. Պոլսի պատրիարքի հետ տեղի ունեցան սուր քննարկումներ, որոնք հող նախապատրաստեցին ինքնավարության վերականգման համար:

[5] Տե՛ս **Ավոյան Ս.,** Առաջին բուրժուադեմոկրատական հեղափոխության ազդեցությունը վրաց հոգևորականության վրա, Կանթեղ, № 1, 2016, էջ 65–72:

Իսկ նրա վերացումով էլ ինքնավարության գաղափարը հիմնովին մասնատվում էր):

1917 թ. Փետրվարյան հեղափոխությունից հետո իրավիճակը փոխվեց: Վրաց հոգևորականները, օգտվելով Ռուսաստանի քաղաքական կյանքում տեղի ունեցած փոփոխություններից՝ մարտի 12-ին, Մցխեթի Սվետիցխովել պատրիարքարան-տաճարում ընդունեցին որոշում, որի համաձայն Վրաց եկեղեցին վերականգնում էր իր ինքնավարությունը և մինչև կաթողիկոս ընտրելը, հոգևոր առաջնորդ էր ճանաչվելու Գուրիադոշի եպիսկոպոս Լեոնիդը[6]: Հաջորդ օրն իսկ՝ մարտի 13-ին, երբ վերջինիս Անդրկովկասյան հատուկ կոմիտեի ժամանակավոր քարտուղար Դավիդ Դավիդովին (Դավիդաշվիլի) հանձնեց Վրաց եկեղեցու ինքնավարության վերականգնման փաստաթուղթը, Կոմիտեն Մցխեթի որոշումները ողջունեց մեծ ոգևորությամբ: Այդ ամենից ոգեշնչված, Վրաց եկեղեցու ժամանակավոր վարչությունը՝ ի դեմս կոմիտեի նախագահ Լեոնիդի[7], 1917 թվականի մարտի 14-ին հայտարարեց էկզարխ Պլատոն Ռոժդեստվենսկուն, որ Մցխեթում վավերացված ակտով նա ազատված է իր պաշտոնից[8]:

Պետք է նշել նաև, որ չնայած այդ պահին Վրաստանում տարբեր կուսակցությունների մեջ ընթացող քաղաքական պայքարին, բոլշևիկներից բացի, բոլոր քաղաքական ուժերը ողջունեցին Վրաց եկեղեցու ինքնավարությունը:

Տեղի ունեցած իրադարձությունները բավական լարված իրավիճակ էին ստեղծել նաև Թիֆլիսում: 1917 թվականի օգոստոսին վրաց հոգևորականները որոշում են կայացնում վերականգնել Թիֆլիսի թեմը[9]: Այս իրադարձությունների համատեքստում՝ օգոստոսի 23-ին նախկին էկզարխ Պլատոնը հեռանում է Թիֆլիսից:

---

[6] ჟურნალი «სვეტიცხოველი» 1917 წ. № 1. გვ. 1.

[7] Վրաց եկեղեցու կառավարության անդամների թվում էին ոչ միայն հոգևոր, այլև գրական-հասարակական հայտնի գործիչներ Վասիլ Բարնովը, Անտոն Նատրոշվիլին, Սոփրոմ Մգալոբլիշվիլին, Գրիգոլ Ղիփշիձեն, Սերգո Գորգաձեն, գեներալ Գիորգի Ղազբեգին, գրող Շիո Դեդաբերաշվիլին, Միխայիլ Մաչաբելին, Սարգիս Գագաբաձեն, Իվանե Ջավախիշվիլին:

[8] Տե՛ս საქართველოს საპატრიარქო არქივი, მიტროპოლიტ ლეონიდის ფონდი. საქმე № 6468:

[9] Նույն տեղում:

Սակայն Անդրկովկասի հատուկ հանձնաժողովի այս որոշումը Սանկտ Պետերբուրգի վրացական կրոնական հաստատությունները, Լեոնիդի՝ որպես եկեղեցու առաջնորդի հարցը տագնապով էին ընկալում[10]:

Չնայած առկա մեծ ոգևորությանը, վրաց հավատացյալները ևս գիտակցում էին, որ իր ինքնավարությունը նոր վերականգնած եկեղեցուն անհրաժեշտ է գործունյա ու նվիրյալ կաթողիկոս-պատրիարք, որպիսին կարող էր լինել այդ ժամանակ Ռուսաստանում գտնվող և երկար տարիներ Վրաց եկեղեցու ինքնավարության համար պայքարող եպիսկոպոս Կյուրոնը: Հոգևորականները դժվարությամբ կարողացան համոզել Կյուրոնին, որ հայրենիք վերադառնա[11]: Նրա՝ Վրաստան ժամանելուց կարճ ժամանակ անց, 1918 թ. սեպտեմբերի 8-ին, Թիֆլիսում հրավիրվեց եկեղեցական հավաք, որտեղ հնչեցվում է նաև Անդրկովկասյան հատուկ կոմիտեի շնորհավորանքը, որով փաստացի ճանաչվում է եկեղեցու ինքնավարությունը:

Հավաքին հաջորդեց 1917 թ. սեպտեմբերի 11-16-ը տեղի ունեցած եկեղեցական վեհաժողովը, որտեղ քննարկվեց և միաձայն ընդունվեց Վրաց եկեղեցու կառավարման նախագիծը: Որոշման համաձայն, Վրաց եկեղեցին ճանաչվեց իր ժողովրդի միակ սրբազան կաթողիկե և առաքելական եկեղեցի: Նրա հետևորդներն էին բոլոր ուղղափառ և ոչ ուղղափառ այն վրացիները, որոնք ապրելով հին վրացական եկեղեցու վարչատարածքային սահմաններում, կմիանային նրան: Վրաց եկեղեցին բաժանվում էր թեմերի, թեմերը՝ շրջանների, իսկ վերջիններս՝ ծխերի: Թեմի բարձրագույն կառավարող մարմինը հանդիսանում էր թեմական խորհուրդը[12]: Վեհաժողովն իր աշխատանքն ավարտեց սեպտեմբերի 17-ին՝ Ամենայն Վրաց կաթողիկոս-պատրիարքի ընտրություններով: Ներկայացվել էին մետրոպոլիտ Լեոնիդի և եպիսկոպոս Կյուրոնի թեկնածությունները: Ամենայն Վրաց կաթողիկոս-պատրիարքի ընտրություններին մասնակցեց 430 պատվիրակ: Քվեարկության արդյունքում պատրիարք ընտրվեց Կյուրոն եպիսկոպոսը[13]:

Թվում էր, թե վրաց պատրիարք ընտրվելուց հետո Մցխեթ-Թիֆլիսի գլխավոր եպիսկոպոսությունը նույնպես պիտի պատկաներ Կյուրոնին, սակայն Լեոնիդը հրաժարվեց Թիֆլիսի թեմի առաջնորդությունից և մետրոպո-

[10] ჟურნალი «სვეტიცხოველი» 1917 წ. № 1.

[11] Տե՛ս **ვარდოსანიძე ს.,** სრულიად საქართველოს კათალიკოზ-პარტიარქი კირიონ II, გამომც. ორთოდოქს-კიპრელი (საბერძნეთი) 1994 წ. გვ 14.

[12] გაზეთი «სახალხოსაქმე» 1918 წ. № 53.

[13] ჟურნალი «სვეტიცხოველი» 1917 წ. № 3.

լիտությունից՝ կոչումից, որը, ըստ վրաց հոգևորականների, հունական և ռուսական համարվում[14]: Այնուամենայնիվ, վրաց ժողովրդի համար դա դարակազմիկ իրադարձություն էր, և այդ էր պատճառը, որ Մցխեթում Կյուրոն II-ի կաթողիկոս-պատրիարք օծվելու օրը հոծ բազմության մասնակցությամբ հատուկ տոնակատարություն կազմակերպվեց: Կյուրոն II-ի օծման արարողությանը ներկա էին Անգլիայի, Բելգիայի և Ֆրանսիայի հյուպատոսները[15]:

Վրաց շատ պատմաբանների կարծիքով, չնայած այս իրադարձությունները տեղի են ունեցել քաղաքական բարենպաստ պայմաններում, այնուամենայնիվ կար այն մտավախությունը, որ անգամ ռուս ուղղափառ եկեղեցուց անջատումից և անկախացումից հետո Ռուսական կայսրությունը կարող էր նորից իրեն հպատակեցնել Վրաց եկեղեցին[16]:

Այդուհանդերձ, տասնամյակներ շարունակ ոչ միայն ռուս ուղղափառ եկեղեցին, այլև Կ. Պոլսի Տիեզերական ուղղափառ պատրիարքությունը և որոշ թեմական եկեղեցիներ չճանաչեցին Վրաց եկեղեցու ինքնավարությունը[17]: Ռուս եկեղեցին ինքնավարությունը որակեց որպես «անջատողականություն» և «ազգայնականություն»[18]:

Ինքնավարության ամրապնդման գործընթացը շարունակվեց նաև Վրաստանի 1918 թ. մայիսի 26-ի անկախության հռչակումից հետո: Այդ պատմական իրադարձությունը ողջունեց Վրաստանի ուղղափառ եկեղեցու կաթողիկոսական խորհուրդը, և այս փաստն առիթ հանդիսացավ եկեղեցի-պետություն հարաբերությունների ձևավորման համար[19]:

Վրաց ուղղափառ եկեղեցին՝ ի դեմս կաթողիկոս-պատրիարք Կյուրոն II-ի, փորձում էր աջակցել Հանրապետությանը և կողմնորոշվել հաստատված տնտեսական և քաղաքական բարդ իրավիճակում, նույնիսկ միջամտում էր

---

[14] Տե՛ս **იმედაშვილი ი.,** კირიონის გაპარტახება და მკვლელობა, გაზეთი «კომუნისტი», 1990 წ. 2 სექტემბერი.

[15] **იმედაშვილი ი.**, კირიონის გაპარტახება და მკვლელობა, გაზეთი «კომუნისტი», 1990 წ. 2 სექტემბერი.

[16] **ჯანიშვილი მ.**, უწმინდესი კირიონი, თბილისი 1917 წ.

[17] Միայն 1943 թ. Հայրենական Մեծ պատերազմի ժամանակ, Ռուս ուղղափառ եկեղեցին ճանաչեց ոչ միայն Վրաց եկեղեցու ինքնավարությունը, այլ շնորհեց առաջնակարգություն՝ ուղղափառ եկեղեցիների համաշխարհային ցուցակում նրան տալով 6-րդ տեղը: Իսկ 1990 թ. Վրաց եկեղեցու ինքնավարությունը ճանաչեց նաև Կ. Պոլսի Տիեզերական ուղղափառ պատրիարքը:

[18] საქართველოს ეკლესიის კალენდარი, 1982 წ. გვ. 154.

[19] გ. ლეონიძის სახ. ლიტერატურის მუზეუმი, სერგი გორგაძის ფონდი № 27–83.

Վրաստանի միջազգային ճանաչման և հարևան երկրների հետ սահմանային պայմանագրերի կնքման հարցերին[20]: Սակայն Վրաստանի կառավարությունը, փորձում էր մեկուսացնել եկեղեցուն՝ պետական քաղաքականությանը մասնակցելուց:

Անկախության տարիներին կառավարությունը օրենք հրապարակեց եկեղեցին պետությունից անջատելու վերաբերյալ. օտարվեցին եկեղեցու գույքը, ունեցվածքը և հոգևոր հաստատությունները: Այս ամենի պատճառով նրանց միջև առկա հակասությունները ավելի սրվեցին, դեմոկրատական Վրաստանի կառավարությունը 1918 թ. մշակեց մի օրինագիծ, որի համաձայն, «հոգևոր անձինք պետք է վտարվեին ուսումնական հաստատություններից»[21]: Կրթական համակարգում այս ամենի վտանգը կանխատեսելով, կաթողիկոս Լեոնիդը բազմիցս դիմել է վրաց կառավարության ղեկավար Ն. Ժորդանիային՝ օրինագիծը վերանայելու խնդրանքով[22]:

Այս ամենից անմասն չէր կարող մնալ նաև Հայոց եկեղեցին: Վրացական աղբյուրներում առկա մեզ հասանելի փաստերը թույլ են տալիս պատկերացում կազմել այն մասին, որ ոչ միայն հեղափոխություններին հաջորդած փուլում, այլև հանրապետությունների գոյության տարիներին, հայ և վրաց եկեղեցիների փոխհարաբերությունները բավական սառն են եղել:

Հայկական աղբյուրներում առկա փաստերը թույլ են տալիս պատկերացում կազմել հոգևոր գործիչների ունեցած դիրքորոշման վերաբերյալ:

Երկու երկրների միջև գոյություն ունեցող հոգևոր փոխառնչությունների մասին է վկայում Թիֆլիսում հրատարակվող «Մշակ» թերթի խմբագիր Համբարձում Առաքելյանի ուղիղ հեռագրալարով խոսակցությունը Մայր Աթոռի դիվանապետ Տիրայր եպիսկոպոսի հետ: Առաջինը հորդորում էր Ամենայն Հայոց կաթողիկոսի անմիջական նախաձեռնությամբ պատվիրակություն ուղարկել Մցխեթ՝ նրա անունից անձնապես շնորհավորելու Կյուրոն II-ին: Միևնույն ժամանակ, Համբարձում Առաքելյանը, ինչպես նաև Հայ ժողովրդական կուսակցության մյուս ներկայացուցիչները, այդ թվում՝ Միքայել Պապաջանյանը, պարտադիր համարեցին, որ պատվիրակությունը կազմվի և Հայոց Հայրապետի շնորհավորական հեռագրով քաղաք ժամանի հենց այդ նույն գիշերը:

[20] საქართველოს საპატრიარქო არქივი, საქმე № 6465, გვ. 2.

[21] **ვარდოსანიძე ს.,** საქართველოს მართმადიდებელი ეკლესია და მოუკიდებელ საქართველოში 1918–1921 წლებში. N 8 2000 წ. თბ. გვ. 135.

[22] Նույն տեղում:

Սա, մեր կարծիքով, դիվանագիտական մի քայլ էր, որով Թիֆլիսում գտնվող հայկական քաղաքական շրջանակների ներկայացուցիչները փորձում էին նաև հոգևոր առաջնորդների միջոցով ամրապնդել երկու ժողովուրդների միջև եղած կապը: Բացի այդ, նրանք շատ լավ էին հասկանում, որ ստեղծված իրավիճակում, երբ Վրաց եկեղեցին ազատվել էր էկզարխությունից և վերականգնել իր ներքին ինքնավարությունը, առավել ցանկալի էր կայուն հարաբերությունների պահպանումը:

Դա գիտակցում էր նաև Հայոց եկեղեցին՝ ի դեմս Գևորգ Ե Սուրենյանցի: Այդ էր պատճառը, որ Հայրապետը անսալով գործիչների խնդրանքին, հենց այդ նույն գիշեր շնորհավորական գրություն ուղարկեց Կյուրոն II-ին[23]: Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի կողմից ուղարկված պատվիրակությունը ջերմ ընդունելության է արժանանում Կյուրոն II-ի կողմից: Դա է վկայում Երևանի փոխթեմակալ Խորեն եպիսկոպոսի հեռագիրը կաթողիկոսին[24], որտեղ նա մանրամասն ներկայացնում է իրենց պատվիրակության ժամանումը Մցխեթ և վրաց հոգևորականության ջերմ ընդունելությունը: Միևնույն ժամանակ նա համոզմունք է հայտնում, որ վրաց պատրիարքը պատրաստ է «պայքարել ժողովուրդների խաղաղ գոյակցութեան և համերաշխութեան համար»[25]:

Վրաց պատրիարքը ևս գիտակցում էր, որ իր հեղինակությունը բարձրացնելու և դիրքերն ամրապնդելու համար իրեն հարկավոր է հոգևոր հենարան: Այդ նպատակով Կյուրոն II-ը համերաշխության և միասնության կոչերով նամակներ ուղղեց Տիեզերական պատրիարք Վասիլ III-ին, Հռոմի պապին և Ամենայն հայոց կաթողիկոս Գևորգ Ե-ին: Պատահական չէր, որ ուղղափառ եկեղեցու պատրիարքը համագործակցություն և միասնություն էր առաջարկում նաև քրիստոնեական կրոնի տարբեր դավանական առաջնորդներին: Սակայն այս ամենը հեռահար նպատակներ էր հետապնդում. համագործակցության և միասնության առաջարկն ուղղված էր աշխարհով մեկ սփռված բազմահազար հայերի և կաթոլիկ վրացիների հարաբերությունների բարդագույն խնդիրների կարգավորմանը:

---

[23] ՀԱԱ, ֆ. 57, ց. 2, գ. 507, թ. 6:

[24] Նույն տեղում, թ. 8:

[25] Նույն տեղում:

1917 թվականի հոկտեմբերի 20-ին Գևորգ Ե Սուրենյանցին գրված նամակում[26] Վրաց պատրիարքը նկարագրում է վրաց եկեղեցու «այրիացած» վիճակը և փաստում, որ այն հեղափոխությունից հետո կրկին շունչ առավ և վերակազմվեց: Այնտեղ նա անդրադարձել է նաև հայ և վրաց եկեղեցիների բարեկամությանը, ինչպես նաև պատմության խորքերում մնացած «ցավալի» պառակտմանը: Միևնույն ժամանակ նա հայտնում է, որ նույնիսկ պառակտումը չի կարող բաժանել երկու եղբայրական ժողովուրդներին: Նույնիսկ նրանց դավանական տարբեր ուղղություններով ընթանալը ոչ մի խոչընդոտ չի կարող հանդիսանալ հետագա հարաբերությունների համար: Վրաց պատրիարքը համերաշխության ու բարի փոխհարաբերություններ կառուցելու կոչ էր անում: Բնականաբար, սա նաև միտված էր տարածաշրջանում ստեղծված նոր իշխանության հիմքերի ամրապնդմանը:

Այնուամենայնիվ, ստեղծված հարաբերությունների սրությունը ստիպում էր, որ հայ եկեղեցին մեծ զգոնություն ցուցաբերի: Խոսքը Գևորգ Ե Սուրենյանցի շնորհավորական նամակի մասին է, որի ռուսերեն տարբերակը լույս է տեսել Թիֆլիսում հրատարակվող «Кавказское слово» լրագրի էջերում, որից արտատպել էր Բաքվում հրատարակվող «Баку» թերթը: Խնդիրն այն է, որ թերթի խմբագրությունը Ամենայն հայոց Կաթողիկոս Գևորգ Ե-ի անունը նշելիս գրել էր, ոչ թե «գերաշնորհ պատրիարք», այլ «եկեղեցական» եզրույթը, որն էլ առաջացրել էր վերջինիս զայրույթը: Նա այդ քայլը դիտեց որպես վիրավորանք և խմբագրության կողմից մտածված արարք[27]: Նույնիսկ լրագրի գլխավոր խմբագիր Ի. Դոլուխանովին բողոք հղվեց, որ թերթի խմբագրությունը վերատպագրի նամակը: Սակայն սրան հետևեց խմբագրի կոշտ պատասխանը, որ այդ ամենի մեջ որևէ չարամտություն չի եղել և դա ընդամենը խմբագրական սխալ է, և որ լրագիրը հարկ չի համարում անդրադառնալ դրան[28]:

Այս ամենով հանդերձ, վերը նշվածից կարելի է եզրակացնել, որ հայ և վրաց եկեղեցիների մեջ եղել են թեկուզ ոչ շատ սերտ, բայց և որոշակի կապեր, ինչը, բնականաբար պետք է պայմանավորված լիներ տարածաշրջանում տիրող իրադրությամբ և հարևանությամբ:

---

[26] Նամակի բառացի թարգմանված տարբերակը պահպանվում է ՀԱԱ-ի ֆ. 57-ում, ինչպես նաև տպագրվել է «Արարատ» ամսագրում: (ՀԱԱ, ֆ. 57, ց. 2, գ. 511, «Արարատ», հունվար-մարտ, № Ա–Գ, 1918, էջ 17):

[27] ՀԱԱ, ֆ. 57, ց. 2, գ. 507, թ. 11:

[28] Նույն տեղում, թ. 10:

Անդրկովկասյան կոմիսարիատի լուծարումից, և անկախ հանրապետությունների հռչակումից հետո հարաբերությունները սառեցին: Հատկապես 1918 թ. հունիսին, երբ հանկարծամահ եղավ Կյուրոն II-ը,[29] նոր կաթողիկոս-պատրիարք ընտրվեց մետրոպոլիտ Լեոնիդը[30]:

Կարելի է եզրակացնել, որ 1917 թ. ռուսաստանյան հեղափոխությունների արդյունքում վրաց ժողովուրդը կարողացավ հասնել այդքան բաղձալի և երկար խմորումներ անցած իր եկեղեցու ինքնավարության վերականգմանը, որը փոխկլրացվեց նաև անկախության ծնունդով: Արդյունքում ձևավորված եկեղեցի-պետություն հարաբերությունները կայուն հիմք հանդիսացան վրաց պետականության ստեղծման և կայացման համար:

Ինքնավարության վերականգնումը նախատեսում էր տարածաշրջանի քրիստոնյա հոգևոր կառույցների՝ մասնավորապես Մայր Աթոռ Սբ. Էջմիածնի հետ կապերի հաստատում: Սակայն պետք է նշել, որ ձևավորված կապերը որևէ կերպ չպայմանավորեցին այն քաղաքական հարաբերությունները, որոնք առկա էին երկու երկրների միջև:

THE ESTABLISHMENT OF AUTOCEPHALY OF THE GEORGIAN CHURCH IN 1917

TAMARYAN J., GHAZARYAN G.

Summary

The revolutionary events of 1917contributed to the restoration of autocephaly of the Georgian Church seen as an important occasion for the Georgian nation, for its spiritual, political life. The prominent religious, political figures , livinig in the Russian Empire, made an essentila contribution especially Kirion II who became the first Catholicos-Patriarch of the autocephalous Georgian Church. The

---

[29] Վրաց պատմագրության մեջ Կյուրոն II-ի մահվան կամ սպանության վերաբերյալ տարիների ընթացքում առաջ են քաշվել տարբեր վարկածներ, մանրամասն տե՛ս **სერგო ვარდოსანიძე,** კირიონ II მკვლელობის შესახებ, ჟურნალი «რანი ვართ ქართველები?» 1997 წ. თბ. № 4 გვ. 17–18. ჟურნალი «ახალისიტყვა» 1918 წ. № 6. ჟურნალი «ახალისიტყვა» 1918 წ. № 7.

[30] გაზეთი «საქართველო» 1919 წ. 25 თებერვალი.

restoration of the autocephalymeant the establishment of ties with the Christian religious organizations of the region in particular with the Mother See of Holy Echmiadzin.

УТВЕРЖДЕНИЕ АВТОКЕФАЛИИ ГРУЗИНСКОЙ ЦЕРКВИ В 1917 ГОДУ

ТАМАРЯН ДЖ., КАЗАРЯН Г.

Резюме

Революционные события 1917 г. способствовали восстановлению автокефалии грузинской церкви, что стало важным событием для грузинского народа, его духовной и политической жизни.

[11] Թանգարանում ուսումնասիրություններ անելու և լուսանկարելն ապահովելու համար շնորհակալություն ենք հայտնում ղեկավարությանը՝ ի դեմս տնօրեն Լյուդմիլա Գրիգորյանին:

Թանգարանի հրատարակած «Քարադարան» խորագրով գրքույկում տեղ է գտել նաև այս սարկոֆագի լուսանկարը, որի բացատրագրում նշված են չափերը և այն, որ ունի նաև հայատառ արձանագրություն: Տե՛ս Քարադարան, տեքստերը՝ **Պետրոսյան Ծ.,** լուսանկարները և ձևավորումը՝ **Հակոբյան Վ.,** Սիսիան, 2010, էջ 7:

[12] **Ստեփանոս Օրբէլեան,** Պատմութիւն նահանգին Սիսական, Թիֆլիս, 1910, էջ 317–321:

Սենեքերիմ Ա (1072– (1094) 1096՞), Հասան Խաչենեցի (1166–1170)[13] և Ստ. Օրբելյանի կողմից հիշատակված երկու թագավորները:

Նրանց գահակալման ժամանակագրությունը հստակեցվել է նաև Սյունյաց հոգևոր կենտրոններից Վահանավանքի հնագիտական պեղումների ընթացքում, որոնք իրականացվել են սկսած 1966 թ.՝ վիմագրագետ Գր. Գրիգորյանի ղեկավարությամբ: Ի թիվս տարաբնույթ գտածոների՝ հայտնաբերվել են նաև տարբեր բովանդակության, այդ թվում՝ նշանավոր անձանց անուններով վիմագրեր: Դրանցից են՝ Վահանավանքի հիմնադիր, Բաղքի իշխան Ձագիկի որդի Վահանը, Սյունյաց թագավորներ Սմբատ Բ-ն, Գրիգոր Ա-ն, թագուհիներ Դինարը, Շահանդուխտը, վերջինիս և Սենեքերիմ թագավորի քույր Կատան և այլք[14]:



Նկ. 4. Ջրվեժի սարկոֆագով դամբարանը (V–VII դդ.), արտատպված Ն. Տոկարսկու «Джрвеж II» աշխատությունից, աղյուսակ 20:

Գրիգոր Ա թագավորի տապանաքարը գտնվել է Սմբատ Բ թագավորի շիրիմի կողքին վանքի սյունասրահի արևելյան հատվածի պեղումների ժամանակ: Ուղղանկյուն տապանաքարի վրա հետևյալ քառատող արձանագրությունն է. «ԹՎԱԿԱՆ ՇԻԱ (1072), ԳՐԻԳՈՐ ԹԱԳԱՒՈՐ ՈՐԴԻ

[13] **Գրիգորյան Գր.,** Սյունիքի թագավորությունը (X–XII դարեր) (ՊԲՀ, 2006, № 2, էջ 144):

[14] Պեղումների նախնական արդյունքների մասին տե՛ս **Գրիգորյան Գր.,** Վահանավանքի պեղումների նախնական արդյունքները (1966–1970 թթ.) (ԼՀԳ, 1970, № 10, էջ 81–93), **նույնի՝** Վիմագրություններ Վահանավանքի 1970–1978 թթ. պեղումներից (ՊԲՀ, 1980, № 2, էջ 154–165):

ԱՇՈՏԿԱ»[15]: Այս տապանագիրը բացառում է սարկոֆագի վիմագրում վկայված Գրիգորի նույնացումը Աշոտիկի որդի Գրիգոր Ա թագավորի հետ, ուստի հավանական է Գրիգոր Բ թագավորի անվան հիշատակությունը: Վերջինս Սենեքերիմ թագավորի չորս որդիներից ավագն էր (մյուսների անուններն են՝ Սմբատ, Սևադա, Կյուրիկե), որի մասին պատմագիրը համառոտ տեղեկություններ է հաղորդում: Սյունյաց թագավորության գահը ժառանգելու առնչությամբ կարդում ենք հետևյալը. «Եւ յետ նորա (Սենեքերիմի – Ա.Հ.) էառ զտէրութիւն նորա որդի իւր Գրիգոր՝ նուազ եւ ընդաղօտ թագաւորեալ»[16]: Նույն Պատմության աշխարհաբար տարբերակում հիշյալ հատվածն այսպես է թարգմանված. «Նրանից (Սենեքերիմից – Ա.Հ.) հետո նրա իշխանությունն ստանձնեց իր որդի Գրիգորը՝ թագավորելով քիչ և թույլ»[17]: Բանն այն է, որ Գրիգոր Բ-ն, թերևս, Սյունյաց այն գահակալն է, որն ամենաերկարն է թագավորել՝ շուրջ վեց տասնամյակ: Չնայած անհավանական թվացող այս ժամանակահատվածին՝ պատմագրի վկայությունը, կարծում ենք, պետք է մեկնաբանել «թույլ» և «անհիշարժան» իմաստներով:

Ինչ վերաբերում է Գրիգոր Բ-ի կյանքի վերջին տարիներին տեղի ունեցած դեպքերին և մահվան տարեթվին, ապա Ստ. Օրբելյանն այդ մասին հիշատակում է իր երկու աշխատություններում: Նախ Պատմության էջերում նշում է, որ սելջուկյան սուլթանության Շամսադդին Ելտկուզ աթաբեկի (1147–1175) տևական ասպատակությունների արդյունքում Սյունյաց աշխարհում տեղի ունեցան ավերածություններ, իսկ 1170 թ. գրավվեց Բաղաբերդը: Սակայն, մինչ այդ. «...ինքն (Գրիգոր Բ թագավորը – Ա.Հ.) եւ եղբայր իւր Սմբատ յառաջ քան զառնուլ բերդին մեռանին ի 615 թուին»[18], այսինքն՝ 1166-ին: Նույնը վկայված է նաև Վաղարշապատի Ս. Կաթողիկեին (Մայր տաճար Ս. Էջմիածնին) նվիրված քնարական «Ողբ»-ում.

«...Որոց վերջին Սենէքարիմ
Նաև Գրիգոր որդի նորին:
Ապա և զայս ի բաց բարձին
Ի ժամանակս Ելտկուզին

---

[15] **Գրիգորյան Գր.,** Վահանավանք. պատմահնագիտական ուսումնասիրություն, Ե., 2007, էջ 58, արձ. 34:

[16] **Ստեփանոս Օրբէլեան,** Պատմութիւն նահանգին Սիսական, էջ 320–321:

[17] **Ստեփանոս Օրբելյան,** Սյունիքի պատմություն, թարգմանությունը, ներածությունը և ծանոթագրությունները՝ Ա. Ա. Աբրահամյանի, Ե., 1986, էջ 270:

[18] **Ստեփանոս Օրբէլեան,** Պատմութիւն նահանգին Սիսական, էջ 337:

Ազգն անիծեալ և պարսկային,
Որք հրով զաշխարհս տոչորեցին
Ի վեց հարիւր մեր թուականին
Եւ տասնևհինգ յաւելուածին...»[19]:

Ցավոք, Գրիգոր թագավորի և նրա եղբայր իշխանաց իշխան Սմբատի մահվան մանրամասների, թաղման վայրի վերաբերյալ լրացուցիչ տեղեկություններ պատմագիրը չի հաղորդում: Դժվար է ասել, թե նրանք ինչ հանգամանքներում են մահացել: Սակայն, անժխտելի է, որ իր տևական գահակալման ընթացքում Գրիգոր Բ-ն մշտապես պայքարել է սելջուկների նվաճողական ոտնձգությունների դեմ՝ ժողովրդին կոչ անելով միաբանվել և չհանձնվել[20]: Միմյանց հաջորդող պաշարումները կարող էին վերջնականապես հյուծել արդեն տարեց արքային, որով էլ, թերևս, պետք է բացատրել տապանագրում վկայված *զփառապեալ* բառի առկայությունը՝ «նեղություն», «չարչարանք», «զրկանք կրած» իմաստով:

Գրիգոր Բ-ն, ըստ էության, դարձավ Սյունյաց նախավերջին գահակալը, որին նրա իսկ ցանկությամբ հաջորդեց Խաչենի իշխաններից Հասան Գեռաքարեցին, որը կնության էր առել Գրիգորի դստերը՝ Կատային. «բայց Գրիգորն, որ իշխէր Բաղաց, ետ ածել ի Խաչենոյ իշխանացն մանուկ մի Հասան անուն ի Գեռաքարեցեացն և ետ զդուստր իւր Կատայն նմա ի կնութիւն և կացոյց ժառանգ թագաւորութեան իւրոյ»[21]: Բացի Կատայից, Գրիգորն ունեցել է մեկ դուստր ևս՝ Շուշիկ անունով, որի անունը հիշատակված է Հովհաննավանքի տապանատան վիմագրերից մեկում. «Ի Թ[ՈՒԻՆ] ՈԻԷ (1178), ՈՂՈՐՄՈՒԹ[ԵԱՄ]Բ ԱՅ, ԵՍ՝ ՇՈՒՇԻԿ, ԴՈՒՍՏՐ ԳՐԻԳՈՐՈ ԹԱԳԱՒՈՐԻՆ

[19] **Ստեփաննոս Օրպէլեանի** Ողբ ի Ս. Կաթուղիկէն, հրատարակեց Կ. Կոստանեանց, Թիֆլիս, 1885, էջ 38:

[20] Սեներքերիմ թագավորի չարանենգ սպանությունից հետո (1096 թ.՞) ընդհուպ մինչև Բաղաբերդի գրավումը (1170 թ.) սելջուկները պարբերաբար արշավում են Սյունյաց երկրամաս, ավերի ու թալանի ենթարկում թագավորության տիրույթները: 1104–1105 թթ. գրավում են Որոտնը, ապա Բղենը, 1126 թ. Հարոն ամիրան կարճ ժամանակով գրավում է Արևիք գավառն (այժմյան Մեղրին) ու Կաքավաբերդը, 1151 թ. սելջուկների ձեռքն են անցնում Շլորուտի, 1157-ին՝ Մեղրիի բերդերը: Այս խառնակ պայմաններում էլ 1166 թ. անսպասելիորեն վախճանվում են Գրիգոր Բ թագավորն ու նրա եղբայր իշխանաց իշխան Սմբատը (տե՛ս Հայ ժողովրդի պատմություն, ՀՍՍՀ ԳԱ, հ. III, Հայաստանը զարգացած ֆեոդալիզմի դարաշրջանում (IX դ. կեսերից մինչև XIV դ. կեսերը), Ե., 1976, էջ 477–478, **Գրիգորյան Գր.,** Սյունիքը Օրբելյանների օրոք, Ե., 1981, էջ 37–39):

[21] **Ստեփանոս Օրբէլեան,** Պատմութիւն նահանգին Սիսական, էջ 336–337:

ԲԱՂԱՑ, ՀԱԼԱԾԵԱԼ Ի ՄԵՐՄԷ ԳԱԻԱՌԷ ԵԿԻ ՅԱՇԽԱՐՀՍ ՀԱՅՈՑ, Ի ՎԱՆՍ ՅՈՀԱՆՈՒ... ԵՏՈՒ ՁԱՔ ՍՐԲՈՅՆ ՍՏԵՓԱՆՈՍԻ Ի ՅՈՒԽՏՍ ՄԲ՝ ՅԻՇԱՏԱԿ ԻՆՁ...»[22]:

Գրիգորի մահից հետո Հասան Խաչենեցին թագավորել է նախքան Բաղաբերդի գրավումը, քանի որ. «մինչ զբերդն կամէին առնուլ՝ Հասան կացոյց բերդապահս, և ինքն առեալ զկին իւր և զընտանիս՝ ի գիշերի ել ի բերդէն և անց, գնաց ի գաւառ իւր և ի տուն ի Խաչէն»[23]: Փաստորեն, Բաղաբերդի գրավումով վերջ դրվեց Սյունյաց թագավորությանը, որի գահակալները «...էր որ անզաւակ մնացին, և էր որ կիսօրեայ փոխեցան, էր որ սպանան և գերեցան եւ մնացեալ էին միայն այս Գրիգոր և Սմբատ, որք այսու օրինակաւ բարձան»[24]:

Վահանավանքի 1966 թ. պեղումների ժամանակ Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու արևելյան սարալանջից գտնվել է Գրիգոր և Սմբատ եղբայրների անվանակիր մի խաչքար՝ հետևյալ արձանագրությամբ. «...ԶԳՐԻԳՈՐ ԵՒ ԶՍՄՊԱՏԻԿ ՅԻՇԵԱ ՔՍ ԱԾ»[25]: Վիմագրի առաջին հրատարակիչ Գր. Գրիգորյանը ծանոթագրում է, որ հիշատակված Գրիգորն ու Սմպատիկը Սյունյաց Սենեքերիմ թագավորի որդիներն են, որոնք իրենց մահկանացուն կնքել են 1166 թ.[26]: Դատելով արձանագրության բովանդակությունից՝ խաչքարը կերտվել է եղբայրների հիշատակին, որոնք, ըստ ամենայնի, միասին են վախճանվել: Գր. Գրիգորյանը նախապես հավանական է համարել նրանց՝ Վահանավանքում թաղված լինելու հանգամանքը[27], որն այդպես էլ չի հաստատվել տապանագրերի բացակայության պատճառով: Նա նաև արձանագրում է, որ Սյունիքում և, մասնավորապես՝ Վահանավանքում, մի շարք անձնանուններ ավարտվում են *իկ* փաղաքշական մասնիկով, ինչպես օրինակ՝ Սմպատիկ, Գրիգորիկ, Վահանիկ, Աշոտիկ[28]: Հետաքրքիրն այն է, որ խնդրո առարկա տապանագրում ևս *Գրիգոր* անունը վկայված է

---

[22] **Ղաֆադարյան Կ.,** Հովհաննավանքը և նրա արձանագրությունները, Ե., 1948, էջ 77, արձ. 4:

[23] **Ստեփանոս Օրբէլեան,** Պատմութիւն նահանգին Սիսական, էջ 337:

[24] Նույն տեղում, էջ 337–338: Սյունյաց թագավորության անկման մասին տե՛ս նաև **Հակոբյան Թ.Խ.,** Սյունիքի թագավորությունը պատմա-աշխարհագրական առումով, Ե., 1966, էջ 114–115:

[25] **Գրիգորյան Գր.,** Վահանավանք, էջ 42, արձ. 10:

[26] Նույն տեղում, էջ 43:

[27] **Գրիգորյան Գր.,** Սյունիքը Օրբելյանների օրոք, էջ 41, ծանոթ. 26:

[28] **Գրիգորյան Գր.,** Վահանավանք, էջ 43:

Գրիգորի ձևով, որը *Գրիգորիկ* անվան արտահայտչաձևերից պետք է լինի, այլ ոչ *Գրիգոր անվան* սեռական հոլովաձևը:

Այն, որ տապանագրում Գրիգորին թագավորի փոխարեն հիշատակված է «յարքա» տիտղոսով (բառավերջին *յ*-ն փորագրիչը սկզբում է զետեղել) չպետք է տարակույս հարուցի, քանի որ նմանօրինակ զուգաձևությունները վիմագիր և մատենագիր սկզբնաղբյուրներում բազմաթիվ են: Իբրև օրինակ, հատվածաբար վկայակոչենք հենց Վահանավանքի վիմագրերից երկուսը, որոնցում հատվածներ, որոնցում Շահանդուխտ թագուհին հիշատակված է մի դեպքում. «…ԴՈՒՍՏՐ ՍԵՒԱԴԱՒ ԱՂՎԱՆԻՑ ԱՐՔԱՒ…»[29], մեկ այլ դեպքում. «…ԴՈՒՍՏՐ ՍԵՒԱԴԱՒ ԱՂՎԱՆԻՑ ԹԱԳԱՒՈՐԻ…»[30]:

Ամփոփելով արձանագրենք, որ Սիսիանի թանգարանի Քարադարանում ցուցադրված սարկոֆագն, ըստ արձանագրության, Սյունյաց Գրիգոր Բ արքայինն է (մահ. 1166 թ.): Իհարկե, բացառված չէ, որ հիշատակվածը նշանավոր իշխանական տան ներկայացուցիչ է, որն իրեն պարզապես *արքա* է կոչում, սակայն, սա քիչ հավանական է: Այնուամենայնիվ, նկատի ունենալով ներքոնշյալ դրույթները, մենք հակված ենք սարկոֆագի վիմագրում վկայված Գրիգորին նույնացնել Սյունյաց արքայի հետ.

ա. Չպետք է պատահական համարել սարկոֆագի՝ բազալտից լինելու հանգամանքը, քանի որ դրանք, սովորաբար, պատրաստում էին տուֆից, որն ավելի հեշտ էր մշակվում: Այս երևույթը որոշակիորեն վկայում է հանգուցյալի ունեցած բարձր դիրքի մասին:

բ. Սարկոֆագի Շաքիից ծագած լինելը չպետք է կասկած հարուցի, քանի որ բնակավայրում վավերացվել են դամբարանային (այդ թվում՝ սարկոֆագային) այլ թաղումներ ևս: Սակայն, կասկածելի է մնում Սյունյաց արքայի՝ Շաքիում թաղվելու պատճառը: Հիշենք, որ Սյունյաց գահակալներից Սմբատ Ա-ն և Վասակ Ա-ն, ըստ Ստ. Օրբելյանի, ամփոփվել են Տաթևի վանքի գավթում, մյուսները՝ Վահանավանքում: Կարելի է միայն ենթադրել, որ Գրիգոր արքայի սարկոֆագով դամբարանը գտնվել է Շաքիի վանքում կամ նրանից ոչ հեռու: Բայց, ցավոք, ոչ այն, ոչ էլ վանական համալիրը մեզ չեն հասել: Հավանական է, որ սկսված սելջուկյան ահագնացող ասպատակություններն են պատճառ հանդիսացել, որ Գրիգոր Բ-ի տապանը չի դրվել ավանդական տա-

[29] **Գրիգորյան Գր.,** Վահանավանք, էջ 63, արձ. 37:

[30] Նույն տեղում, էջ 71, արձ. 55:

պանավայրերում (Տաթև, Վահանավանք), այլ քիչ հայտնի՝ թերևս գաղտնի մի տեղում, որպեսզի թշնամիների ձեռքով աճյունը չանարգվի[31]:

գ. Սյունյաց Գրիգոր Բ թագավորը գահակալել է առնվազն XII դարասկզբից և ըստ պատմագիր Ստ. Օրբելյանի՝ եղբոր հետ միասին իր մահկանացուն կնքել է 1166 թ.: Ինչպես պատմագրի հիշատակությունը, այնպես էլ արձանագրության հնագրական առանձնահատկությունները հիմք են տալիս սարկոֆագը թվագրել XII դարով:

դ. Տևական գահակալման ընթացքում Գրիգոր թագավորը մշտապես պայքարել է սելջուկ-թուրքերի դեմ, հաճախ նաև՝ հաղթանակելով: Վիմագրում նրան վերագրված *զփառապսակ* բառի առկայությունը կարելի է մեկնաբանել հենց այդ տեսանկյունից:

ե. Այն, որ *արքա* տիտղոսով հիշատակվում էին հիմնականում թագավորները, ապացուցվում է վիմագիր ու մատենագիր սկզբնաղբյուրներով:

զ. *Գրիգորի* անվանաձևը, թերևս, նույն *Գրիգորիկն* է, քանի որ *իկ* փաղաքշականով հայտնի էին Սյունյաց աշխարհիկ բարձրաստիճաններից շատերը, ինչպես օրինակ՝ Ձագիկ, Աշոտիկ, Վասակիկ, Գրիգորիկ, Սմպատիկ և այլք:

THE EPONYMOUS SARCOPHAGUS OF KING GRIGOR II OF SYUNIK

HARUTYUNYAN A.

Summary

The sarcophagus (discovered at the wayside leading to Shaki village in 1985) exhibited at Karadaran (open-air hall of stone artifacts) of the History Museum named after Adontz in the town of Sisian.According to the three-line inscription preserved on one of the narrow facets, the remains of King Grigor are kept there. In the chronological book “Gavazangirk” about kings of Syunik two persons bearing the name Grigor are mentioned; Grigor I, the son of Ashot (Ashotik, 1051–1072), Grigor II, the son of Senekerim (1096(?)–1166). The first is buried in Vahanavank and his tombstone was found during the archaeological excavations of the monastery, while historiographer Stepanos Orbelyan providesonly

[31] Այս տեսակետը մեզ հուշեց աղբյուրագետ Կարեն Մաթևոսյանը:

conciseinformation about Grigor II the elder son of King Senekerim, who died in the same year as his brother Smbat in 1166. The paleographic inscription of the sarcophagus is also characteristic of XII c.. Taking into consideration of the abovementioned, Grigor, mentioned in the inscription of the sarcophagus, should be identified with the king of Syunik. The presence of the inscription on the sarcophagus enables us to assume that it was not buried but was placed in an analogous tomb structure already known from Jrvezh.

ЭПОНИМНЫЙ САРКОФАГ СЮНИКСКОГО ЦАРЯ ГРИГОРА II

АРУТЮНЯН А.

Резюме

Саркофаг, обнаруженный в 1985 г. на обочине дороги, ведущей в село Шаки, выставлен под открытым небом в Карадаране (хранилище каменных артефактов при Историческом музее им. Н. Адонца в г. Сисиане). Согласно трехстрочной надписи, сохранившейся на одной из узких сторон саркофага, в нем находятся останки царя Григора. В хронологическом списке сюникских царей – «Гавазанагирк» упомянуты два Григора – Григор I, сын Ашота (Ашотик, 1051–1072), Григор II, сын Сенекерима (1096(?)–1166). Первый похоронен в Ваанаванке. Его надгробный камень был найден во время археологических раскопок монастыря, а историограф Степанос Орбелян дает лишь краткую информацию о Григоре II – старшем сыне царя Сенекирима, умершем в год смерти своего брата Смбата, в 1166 г. Палеографические особенности надписи на саркофаге также характерны для XII в. Исходя из сказанного, Григора, упомянутого в надписи на саркофаге, следует идентифицировать с царем Сюника. Наличие надписи на саркофаге позволяет предположить, что он не был погребен, а был помещен в аналогичную структуру гробниц, уже известную из Джрвежа.

ՀՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ
ARCHAEOLOGY

ԱՐՑԱԽԻ ՆՈՐԱՀԱՅՏ ԱՂԱՀԵՃ ԱՄՐՈՑԸ ԵՎ ՏԱՃԱՐ-ԶԻԿՈՒՐԱՏԸ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ Բ., ՍԱՐԳՍՅԱՆ Գ., ԴԱՎԹՅԱՆ Ա.
info@shoushi.am; gaganj@rambler.ru; davtan@yahoo.com

Աղահեճ կամ, ինչպես այն գրանցվել է Արցախի պատմամշակութային հուշարձանների պետական կադաստրում, Միրիկ-1 ամրոցը գտնվում է Արցախի Հանրապետության Քաշաթաղի շրջանի Միրիկ գյուղի արևմտյան եզրի բարձրադիր բլրի գագաթին: Ամրոցը տեղակայված է Աղավնո գետի աջ ափին բարձրացող, արևմուտք-արևելք առանցքով ձգվող բազալտի լավայի հոսքով կազմավորված լեռնաբազուկի արևելյան վերջավորության վրա *(նկար 1)*:

Հուշարձանը հայտնաբերել է հնագետ Գ.Մ. Սարգսյանի 2013 թ. Արցախի Հանրապետության պատմամշակութային հուշարձանների հաշվառման, գոտեվորման պետական ծրագրի շրջանակներում իրականացվող դաշտային հետախուզական աշխատանքների ընթացքում[1]: Հուշարձանի վերաբերյալ պատմական տեղեկություններ չկան: Այն չի հիշատակվում ո՛չ միջնադարյան աղբյուրներում, ո՛չ տեղագիր հեղինակների կամ այլոց ճանապարհորդական հուշերում և ո՛չ էլ խորհրդային ու հետխորհրդային շրջանի ուսումնասիրողների մոտ: ՀՀ ԳԱԱ Հայագիտական ուսումնասիրությունները ֆինանսավորող համահայկական հիմնադրամի «Արցախի նորահայտ ամրոցների ուսումնասիրություն» թեմայի շրջանակներում, 2016–2017 թթ. հուշարձանը մանրամասն հետազոտել է Հնագիտության և ազգագրության ինստիտուտի գիտա-

[1] Տե՛ս **Սարգսյան Գ., Գնունի Ա.,** Հակոբյան Ա., Սյունիքի արևելյան սահմանների պաշտպանական համակարգի ձևավորումը մ.թ.ա. 2–1 հազարամյակներում, Վէմ, Ե., 2015, 1(45), էջ 160–162: **Ավետիսյան Հ., Գնունի Ա., Բոբոխյան Ա., Սարգսյան Գ.,** Բրոնզ-երկաթեդարյան Սյունիքի սրբազան լանդշաֆտը, Ե., 2015, էջ 10, 20:

հետազոտական խումբը: Կիրառելով նորագույն տեխնոլոգիաներ՝ խումբը, ի թիվս այլ նորահայտ ամրոցների, այստեղ ևս իրականացրեց անօդաչու թռչող սարքով (դրոն) հուշարձանի տարածքի նկարահանում, և լուսանկարների համակարգչային մշակման արդյունքում ստացավ հուշարձանի տեղահանույթն ու երևացող կառույցների գլխավոր հատակագիծը[2]: Վերջինս հնարավորություն ընձեռեց ուսումնասիրությունն ավելի հիմնավորված ու առարկայական դարձնել *(նկար 2)*:

Ամրոցը բաղկացած է լեռնաբազուկի գագաթնագծին տեղադրված միջնաբերդից, նրա լանջերին նստած բնակատեղիից ու բլրի ստորոտում և արևմտյան կողմում սփռվող դամբարանադաշտից: Ամրոցի բնակատեղին նստած է ամրոցակալ բլրի հյուսիսային ու հարավային լանջերին՝ մինչև 7.0 մ բարձրությամբ պահպանված պարիսպ-հենապատերով կազմակերպված արհեստական դարավանդներին: Բնակատեղիի հետքեր նկատվում են նաև արհեստական դարավանդներից դուրս, բարձունքի ստորոտում: Միջնաբերդի և բնակատեղիի բոլոր պարիսպները կառուցված են մեծածավալ անմշակ քարերից՝ չոր կիկլոպյան շարվածքով:

Միջնաբերդն զբաղեցնում է սրածայր լեռնաբազուկի 350 մ X 30 մ չափերով նեղ ու երկար, ակնհայտորեն մարդու կողմից հարթեցված մակերեսով գագաթնագիծը: Այն ամբողջ պարագծով ամրացված է եղել պարիսպներով, որոնցից պահպանվել են հիմնաքարերը: Ամենամատչելի՝ արևմտյան կողմից միջնաբերդը պաշտպանված է մոտ 50 մ երկարությամբ ու 2,0 մ լայնությամբ հզոր պարսպով, որի հյուսիսային եզրին նկատվում է միջնաբերդի գլխավոր մուտքը:

2017 թ-ի օգոստոսին ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի ու ԵՊՀ Հնագիտության և ազգագրության ամբիոնի համատեղ արշավախումբը ստուգողական պեղումներ իրականացրեց ամրոցի երկու տեղամասերում[3]: Պեղումների ընթացքում պարզվեց, որ ամրոցը կառուցվել է Ք.ա. 9–8-րդ դարերից ոչ վաղ, և որպես ամրոց գոյատևել է մոտ 300 տարի: Ամրո-


---

[2] «Դրոն»-ը գիտահետազոտական խմբին է նվիրել Արցախի թեմի առաջնորդ Պարգև արք. Մարտիրոսյանը, ինչի համար մեր երախտագիտությունն ենք հայտնում.


[3] Պեղումները նախաձեռնել էր «Քաշաթաղ» հիմնադրամը՝ «Հայրենասեր» կազմակերպության ներկայացուցիչ, բարեգործ՝ Ստեփան Սարգսյանի ֆինանսավորմամբ: Արշավախմբի ղեկավարն էր ԵՊՀ Հնագիտության և ազգագրության ամբիոնի վարիչ պ.գ.դ. Հ. Ավետիսյանը, անդամներն էին Գ. Սարգսյանը, Ա. Գնունին, Բ.Կարապետյանը և Ա. Դավթյանը:



Նկար 1. Աղահեճ ամրոցի ընդհանուր տեսքը հարավից



Նկար 2. Աղահեճ ամրոցի տեղահանույթը, երևացող կառույցների գլխավոր հատակագծով ու առանձին շինությունների համարակալմամբ (հորիզոնականները անցկացված են 1,0 մետրից)



Նկար 3. Դղյակը վերևից
(նկարված է դրոնով)




Նկար 4.Դղյակի կորագիծ պարսպի
ճակատի հատված



Նկար 5. Ժայռակերտ դարպասները
արևմուտքից (դիմացը պարսպի ճակատն է)



Նկար 6. Հատված կուռքերի հարթակից



Նկար 7. Զիկուրատը վերևից (նկարված է
դրոնով



Նկար 8. Զիկուրատի աշտարակը
արևմուտքից



Նկար 9. Ձիկուրատի աստիճանավանդակը ներքևից



Նկար 10. Զիկուրատի աստիճանավանդակի շքամուտքը



Նկար 11. Ժապավենաձև հարթակների արմ. ճակատը




Նկար 12. Նույնի հատվածը




Նկար 13. Տաճար տանող ճանապարհի հատված



Նկար 14. Ժայռապատկեր քարտեզ-սխեման



Նկար 15. Զիկուրատի սխեմատիկ հատակագիծը աստիճանավանդակի փռվածքով



Նկար 16. Զիկուրատի և ամրոցանիստ լեռան սխեմատիկ կտրվածքը

ցի միջնաբերդի բոլոր շինությունները միաշերտ են և կառուցվել են միանգամից՝ երկաթի լայն տարածման ժամանակաշրջանում: Մինչև Ք.ա. 9-րդ դարը այստեղ բնակավայր չի եղել, իսկ Ք.ա. 6-րդ դարում ամրոցը լքվել է, և դրանից հետո՝ վաղ հայկական, անտիկ, վաղ ու զարգացած միջնադարում դրա շրջակայքում բնակվել են մարդիկ, բայց ամրոցը, որպես այդպիսին, չի օգտագործվել և միջնաբերդում մշտական բնակություն չի եղել: Պեղումների արդյունքները և նախնական հետազոտությունները թույլ են տալիս միջնաբերդի կառուցապատումը դիտարկել որպես երկու հիմնական՝ ծավալա-տարածային և գործառութային համալիրների միասնություն.

1. Պալատական՝ վարչա-կառավարչական համալիր՝ «դղյակ» (պալատ և «ագորա»):

2. Հոգևոր կրոնա-պաշտամունքային համալիր (ժայռակերտ դարպասներ, Կուռքերի հարթակ, և տաճար-զիկուրատ):

<u>1. Պալատական, վարչա-կառավարչական համալիր՝ *դղյակ*.</u>

<u>Դղյակը</u> (կոորդինատներն են՝ N. 39 41 24,1 E. 46 19 40,7 Alt. 1596) տեղակայված է միջնաբերդի ծայր արևելյան եզրին և բաղկացած է երկու մասից՝ այսպես կոչված պալատից (հնարավոր է նաև պաշտամունքային կառույց) և բաց հրապարակից *(նկար 3)*: Հատակագծում եռանկյունաձև 90x40 մ. չափերով դղյակը առանձնանում է միջնաբերդի հիմնական հատվածից 3,0 մ լայնությամբ, 30,0 մ երկարությամբ ու մինչև 4,0 մ բարձրությամբ պահպանված կորագծով ընթացող հզոր կիկլոպյան պարսպով *(նկար 4):* Պալատը բազմասենյականոց կառույց է, որի հյուսիսային հատվածը զբաղեցնում է պալատի ներքին բակը: Հարավային հատվածի սենյակները, կից լինելով ժայռագծին, մասամբ ժայռափոր են: Պալատի արևելյան՝ հրապարակին նայող 3 սենյակների ճակատները կառուցված են կողքի վրա ցից կանգնած մեծ, տափակ սալերից՝ այսպես կոչված օրտոստատ տեխնիկայով: Այս շինարարական տեխնիկան հազվադեպ է կիրառվել երկաթեդարյան ժամանակաշրջանում և օգտագործվել է հիմնականում հասարակական մոնումենտալ կառույցներում: Պալատի արևելյան ճակատի դիմաց տարածվում է արտաքին պարագծով կիկլոպյան պատերով եզերված բաց հրապարակ: Միջնաբերդի հարավային պարսպագծի տակով դեպի դղյակ է գալիս միջնաբերդի գլխավոր ճանապարհը և լայն բացված դարպասով մտնում բաց բակ:

Դղյակը, իր կառուցապատման առանձնահատկություններով հանդերձ, միջնաբերդի գլխավոր ճանապարհի վերջնակետում գտնվող հասարակական

նշանակալի (մոնումենտալ) կառույց է, որի դիմաց տարածվում է բաց հրապարակ: Կառուցապատման նման ծավալա-տարածային լուծումը հիշեցնում է հին աշխարհի համայնավարական հասարակություններում գործող հասարակական հավաքատեղիի, ժողովատեղիի՝ *ագորայի* կազմակերպման սկզբունքը, ինչի տարրերը այս համալիրում ակնհայտ են: Ընդարձակ ագորա հրապարակի առկայությունը խոսում է ստվար բնակչություն ունեցող ամրոց-բնակատեղիի մասին:

<u>Բ. Հոգևոր, կրոնա-պաշտամունքային համալիր</u>

Հոգևոր՝ կրոնա-պաշտամունքային նշանակության կառույցներն զբաղեցնում են միջնաբերդի տարածքի մոտ ¾-ը և ներկայացված են երեք ճարտարապետական համալիրներով.

<u>ա. Ժայռակերտ դարպասների խումբ.</u>

Գտնվում է զիկուրատի ու պալատական համալիրի ճիշտ մեջտեղում (կոորդինատներն են՝ N. 39 41 22,5 E. 46 19 35,8 Alt. 1611): Բաղկացած է ժայռակերտ դարպասներից, նրանց թիկունքում գտնվող երկու սենյակներից (որոնցից մեկը՝ գետնափոր) և միջնաբերդի գլխավոր ճանապարհից համալիր մտնող ժայռափոր մուտքից: Ժայռակերտ դարպասները պատաշարով կառուցված շինություն չեն, այլ միջնաբերդի մակերեսի բնական ժայռային մերկացումները մարդու կողմից կտրելու, արհեստականորեն հարթեցնելու ընթացքում ակնհայտորեն միտումնավոր թողնված ուղղահայաց պատ հիշեցնող նեղ ու երկար բնական ժայռազանգված, որի մեջ բացված է մուտք-անցում՝ դարպաս: Դարպասի ներսում բնահողի բազալտե զանգվածի մեջ 2.2 մ խորությամբ փորված, բացված է 7x3 մ չափերով ժայռափոր սենյակ: Վերջինս եղել է երկհարկանի շինության կիսանկուղային առաջին հարկը:

Ժայռակերտ դարպասների ճակատային գիծը մեզ է հասել խարխլված վիճակում: Նրա երկու աhռելի զանգվածները ժամանակի ընթացքում տեղից պոկվել, սահել են գետնափոր սենյակի մեջ: Այնպես որ, երբեմնի ժայռային պատի ճակատից տեղում կանգուն են մնացել հյուսիսային ժայռազանգվածը և դարպասի հարավային՝ աջակողմյան շրջանակը կազմող 2.5 մ բարձրությամբ մի ցից կանգնած ժայռաբեկոր *(նկար 5)*: Համալիրը, բացի զիկուրատին նայող ժայռակերտ դարպասներից, ունեցել է նաև միջնաբերդի հիմնական ճանապարհից առանձնացված մուտք:

բ. Կուռքերի հարթակ-սրբատեղի

Ժայռակերտ դարպասների համալիրի և զիկուրատի միջև ընկած բաց տարածքի կենտրոնի բլրակին պահպանվել են քարաշեն պատի մեջ վերցրած 8–10 շարքով կանգնեցված 0,5–0,7 մ բարձրության ցից քարեր *(նկար 6)*: Քարերի ծայրերը շատ դեպքում կոտրված են, բայց մեկի վրա հստակ երևում է նախաքրիստոնեական պաշտամունքային կուռքի արձանիկին բնորոշ գլուխ ընդգծող ակոսավոր փորվածքը: Կուռքի կողքի ցից ժայռակտորի մեջ փորված է սանդի մշակված կլոր փոս: Նման խմբավորված կանգնած ցից քարեր միջնաբերդի այլ կետերում չկան, ուստի կարելի է ենթադրել, որ պատաշարի մեջ վերցված այս ցից քարերը եղել են նախնյաց Կուռքերի հարթակի իմաստը կրող սրբատեղի:

գ. Տաճար – զիկուրատ

Գտնվում է միջնաբերդի կենտրոնում (կոորդինատներն են՝ N. 39 41 21,4 E. 46 19 32,8 Alt. 1619): Բաղկացած է միջնաբերդի ամենաբարձր կետի բլրակին կանգնած բազմաստիճան բուրգ-աշտարակից, դրան արևմուտքից հարող ժայռափոր ծավալից և ամրոցանիստ լեռնաբազուկի հյուսիսային լանջից դեպի բուրգ-աշտարակ բարձրացող, երկարաձիգ, թեքադիր աստիճանավանդակից ու ժապավենաձև հարթակներից (նկար 7, նկար 15, նկար 16): Ամբողջ համալիրը կառուցված է անմշակ ճեղքած քարերից՝ չոր կիկլոպյան շարվածքով:

Մինչև 4.0 մ բարձրության բուրգ-աշտարակը (նկար 8) ավարտվում է 9.60x14.50 մ չափերի հարթ, անհավասար ուղղանկյուն հարթակով: Աշտարակին հարավից կից են մեկ, իսկ արևմուտքից՝ երկու ավելի փոքր, աստիճանաձև հարթակ-որմնահեծեր: Աշտարակի հարթակի կենտրոնում թեթև ուրվագծվում են ուղղանկյուն ենթադրաբար սեղան-ատրուշանի հիմք հանդիսացող կառույցի հիմնաքարերը: Գագաթի հարթակի մակերեսին առկա են գանձախույզերի կողմից փորված երեք ոչ խորը փոսեր, որոնց մեջ երևում է հարթակի միատարր քարաշեն զանգվածը: Աշտարակը տեղակայված է միջնաբերդի գագաթի ամենանեղ կետում և իր ու հարավային հարթակ-որմնահեծի երկարությամբ ամբողջովին փակում է միջնաբերդի մուտքից դեպի ժայռակերտ դարպասներ ու պալատական համալիր տանող անցումը: Այն հնարավոր է իրականացնել աշտարակը հարավից շրջանցելով՝ միջնաբերդի գլխավոր ճանապարհով: Արևմուտքից զիկուրատի աշտարակը սահմանազատվում

է 2.5-3.0 մ խորությամբ փորված մոտ 12.0x6.0 մ չափերի մի կառույցով (հնարավոր է՝ սենյակ կամ գետնափոր ներքին բակ)։ Վերջինիս հարավային ճակատը կազմող ժայռային պատի մեջ բացված 1.5 մ լայնությամբ փորված մուտքը տանում է դեպի միջնաբերդի գլխավոր ճանապարհը։

Առանձնակի ուշադրության է արժանի զիկուրատի թեքադիր հարթակ-աստիճանավանդակը (նկար 9)։ Այն սկիզբ է առնում ամրոցանիստ լեռնաբազուկի հյուսիսային ստորոտի արևելյան կողմից դեպի տաճար տանող հնագույն ճանապարհից (նկար 13), որի մոտ 200 մ պահպանված հատվածն ունի 2.0-2.5 մ լայնություն, մասամբ սալապատ մակերես և ներսից ամրացված է լանջի թեքությունը պահող քարաշեն ցածր հենապատով։ Ճանապարհի վերջնակետից մոտ 6.0 մ վերև պահպանվել է զիկուրատի աստիճանավանդակի կանոնավոր կառուցված շքամուտքը։ Այն երկու կողմերից զանգվածեղ ժայռաբեկորներով ուղղորդվող, 2.0 մ լայնությամբ, 5 շարք աստիճաններով վեր բարձրացող անցում է (նկար 10)։ Շքամուտքից վերև աստիճանավանդակը լայնանում է մինչև 8.0 մ և այս չափերով, ամբողջովին քարաշեն, ուղիղ բարձրանում է մինչև զիկուրատի գագաթը։

Թեքադիր աստիճանավանդակի ընդհանուր երկարությունը 70.0 մ է, թեքությունը՝ 45°, ներքին ու վերին կետերի բարձրության նիշերի տարբերությունը՝ 46.0 մ, ամենամեծ լայնությունը՝ 8.0 մ։ Զիկուրատի աստիճանավանդակը կազմված է երկու հատվածներից՝ ժապավենաձև եզրապատերով հարթակներից *(նկար 11, նկար 12)* և նրան ներքևից հարող ու աջ կողմից շրջանցող հիմնական աստիճանավանդակից։ Վերջինս սկիզբ է առնում ներքևի շքամուտքից և 8.0 մ լայնությամբ բարձրանում մինչև ժապավենաձև հարթակների 3.0 մետրանոց ճակատը։ Այստեղ նա շրջանցում է հարթակները աջից և արդեն 2.5 մ լայնությամբ բարձրանում մինչև զիկուրատի աշտարակ։ Հիմնական աստիճանավանդակը եզրագծերում պատաշար չունի և նրա թեքադիր մակերեսը, ամբողջ լայնությամբ կազմված է միջին չափի, ճեղքած, անմշակ քարերից չոր շարվածքով դրված առնվազն 25-30 աստիճաններից։ Վերջիններիս պահպանվածությունը տարբեր է, բայց կարելի է ընդունել, որ աստիճանի միջին բարձրությունը 0,5-0,8 մ է, լայնությունը՝ 0,8-1,5 մ։ Կանոնավոր քարաշեն եզրապատերով ներփակվող ժապավենաձև հարթակները հիմնական աստիճանավանդակից բարձր կանգնած երկարաձիգ թեքադիր տարածություն է։ Այն սկիզբ է առնում վերևից՝ զիկուրատի աշտարակից և, իջնելով մինչև աստիճանավանդակի բարձրության կեսը, փակվում է 3,0 մ բարձրության ճակատով։

Ժապավենաձև հարթակի մակերեսի տարբեր նիշերում պահպանվել են 4–5 մինչև 1,0–1,6 մ բարձրության, ճակատներով փակվող փոքր հարթակ-հրապարակներ: Վերջիններս միմյանց հետ կապվում էին արևելյան եզրում ուրվագծվող նեղ աստիճաններով: Այն տպավորությունն է ստեղծվում, որ ժապավենաձև թեքադիր տարածքում ժամանակին դրանք կազմված են եղել իրար հաջորդող մի քանի փոքր, հորիզոնական մակերեսով հրապարակ-հարթակներից: Ստացվում է, որ ժապավենաձև հարթակները զիկուրատի բուրգ-աշտարակի գործառույթի շարունակությունը կրող տարր են՝ մի այլ ճարտարապետական ձևի մեջ, որի իմաստն ու խնդիրը հենց այդ փոքր հարթակ-հրապարակներն էին:

Ամփոփելով զիկուրատ-տաճարի նկարագրությունը, հիշենք, որ այս կառույցների հայրենիքը Միջագետքն է: Իհարկե, առանձին աշտարակատիպ պաշտամունքային կառույցներ Հայաստանում հայտնի են դեռ վաղ բրոնզի դարաշրջանից (Մոխրաբլուր, Ջրահովիտ), բայց ակնհայտ է, որ այդ, հանրային կարիքների համար նախատեսված սրբարանները համադրելի չեն միջագետքյան տաճարների հետ[4]: Որոշ մասնագետներ զիկուրատ էին համարում նաև Էրեբունիի ուրարտական Խալդի աստծո տաճարի հարավային կողմի քառանկյուն աշտարակը[5]:

Արցախյան տաճարը թվագրվում է շատ ավելի ուշ ժամանակաշրջանով և այլ մշակութային միջավայրի արգասիք է, բայց որպես ճարտարապետական կառույց, լիովին համապատասխանում է զիկուրատներին: Հիշենք. որ այդ բառը բաբելոներեն նշանակում է «սարի գլուխ»[6], այսինքն՝ տաճար սարի գլխին: Զիկուրատի պարտադիր հատկանիշներն են՝ բազմաստիճան արհեստական բուրգի (սարի) գագաթին կանգնած գլխավոր աստծո տաճարը և ստորոտից դեպի գագաթի տաճար տանող աստիճանավանդակը: Զիկուրատի ստորին հարթակ-աստիճանները հաճախ նվիրվում էին պանթեոնի մյուս աստվածներին: Արցախյան զիկուրատը կառուցված է բնական բլրի գագաթին, բայց հստակ ընդգծված աստիճանավանդակով ու դեպի տաճար տանող

---

[4] **Ավետիսյան Պ.,** Հայկական լեռնաշխարհի հնամշակութային միջավայրի ձևափոխումների հիմնական միտումները վաղ բրոնզի դարում, (ՊԲՀ, № 2, Ե., 2012, էջ 17): **Խանզադյան Է,** Ջրահովիտ, (Հայաստանի հնագույն մշակույթը, պր. 3, 2008, էջ 32): **Арешян Г.** Искусство куро-аракской культуры. Материалы II международного симпозиума по армянской культуре (отдельный оттиск), Е., 1978, с. 8.

[5] https://ru.wikipedia.org/wiki/Зиккурат

[6] **Оганесян К.** Кармир Блур IV (Архитектура Тейшебаини, Е., 1955, с. 28).

ճանապարհով: Պանթեոնի մյուս աստվածներին նվիրված հարթակների գործառույթը, ըստ ամենայնի, կատարում էին ժապավենաձև թեքադիր ծավալի հարթակ-հրապարակները:

Այստեղ խոսքը վերաբերում է Ք.ա. 9–7-րդ դդ. Հայկական լեռնաշխարհի հյուսիս-արևելյան շրջանների բնակչության հավատալիքներին: Նյութական մշակույթում նկատվող բազմաթիվ զուգահեռները փաստում են, որ տվյալ ժամանակաշրջանում տարածաշրջանը գտնվել է իրանական ու առաջավորասիական զգալի ազդեցության ներքո[7]: Գերիշխող կրոնը հնուց եկող նախնյաց պաշտամունքի ու տոտեմիզմի վերապրուկներով համեմված արևապաշտությունն էր: Կարելի է ընդունել, որ զիկուրատի գագաթի բուրգ-հարթակը նվիրված է եղել Արևի աստծուն, և այնտեղ վառվել է հավերժական կրակ, իսկ ժապավենաձև հարթակի փոքր հորիզոնական հրապարակները նվիրված են եղել դիցարանի մյուս աստվածներին: Մտովի վերարտադրելով զիկուրատում կատարվող ծիսակարգը, կարելի է ենթադրել, որ թափորը գալիս էր տաճար տանող ճանապարհով, անցնում աստիճանավանդակի շքամուտքով, հիմնական աստիճաններով բարձրանում մինչև զիկուրատի գագաթի Արևի աստծո տաճարը: Այստեղ երկրպագելով խունկով ու հոտավետ յուղերով համեմված հավերժական կրակին, թափորը իջնում էր ժապավենաձև հարթակով՝ ճանապարհին խոնարհվելով դիցարանի մյուս աստվածներին:

Վերը շարադրածը ենթադրել է տալիս, որ Միրիկ-1 ամրոցը շարքային ամրոց-բնակատեղի չի եղել: Ամրոցի միջնաբերդը նախագծվել, կառուցվել ու օգտագործվել է ոչ որպես կենցաղային բնակության կամ ժողովրդի պաշտպանության վայր: Միջնաբերդում փաստագրված երկու ճարտարապետական համալիրներից ոչ մեկը կենցաղային կառույց չէ: Հուշարձանի շինությունները իրենց դիրքով, ծավալով, մոնումենտալությամբ, բարդությամբ ու ֆունկցիոնալ նշանակությամբ աննախադեպ երևույթ են տարածաշրջանում ու նախատեսված են եղել մարդկանց մեծ զանգվածների համար: Ուստի պետք է ընդունել, որ այն ծառայել է ոչ միայն Միրիկի ու նրա շրջակայքի բնակչությանը, այլև հանդիսացել է մի ավելի մեծ պետական միավորման հոգևոր ու քաղաքական կենտրոնը՝ մայրաքաղաքը: Նման եզակի ու հզոր կառույցների համա-

[7] **Саргсян Г.М., Гнуни А.В.** Новые данные о культе и религии в восточных областях Армении во второй-третьей четвертях 1 тыс. до н.э. (местные традиции и инокультурное влияние) (Археологические вести, вып. 21, СПб., 2015, с. 115).

լիրներ կարող էր ձեռնարկել միայն պետականության մակարդակի ներքին կազմակերպվածություն ունեցող հասարակությունը:

Այդ պետական կազմավորման մեջ կարող էին մտնել Աղավնո ու Հոչանց գետերի հովիտների բրոնզ-երկաթեդարյան ժամանակաշրջանից եկող այնպիսի ամրոցներ, ինչպիսիք են Սպիտակաջուրը, Եզնագոմերը, Հակ-1-ը և Հակ-2-ը, Աղքատխերտը, Հերիկը, Մերիկ-2-ը, Մերիկ-4-ը, Բերդիկը, Մկնատամի բերդը (Ղուշչի-1), Վժնաբերդը (Ղուշչի ղալա), Արահուծը (Ղալաջիկ), Դաշտասարը (Դուզդաղ), Սոննասարը, Հոչանցը, Ծիծեռնավանքը ու մոտակա փոքր բնակատեղիները:

Այդ պետական կազմավորման հնագույն անվանումը հնարավոր է վերականգնել հիմք ընդունելով ուրարտագետ Հ. Կարագյոզյանի այն դիտարկումը, որի համաձայն Աղահեճ անունը «Ելահնե» ձևով հիշատակված է Ծովինարի ուրարտական արձանագրության մեջ՝ Ռուսա Ա-ի (Ք.ա. 735–713 թթ.) նվաճած երկրների շարքում[7]: Երկիր ասելով ուրարտացիները հասկանում էին Էթիունի համադաշնության մեջ մտնող որոշակի ցեղային միության թագավորություն:

Չի բացառվում, որ հնուց ի վեր խնդրո առարկա պետական կազմավորումը կրել է Աղահեճք անվանումը՝ Աղահեճ (Միրիկ-1) ամրոց-մայրաքաղաքով: Աղավնո – Հոչանց գետերի ավազանում Աղահեչք անվամբ գավառ մեզ հայտնի է վաղ միջնադարից[8]: Այն միշտ հիշատակվում է հոգնակի՝ Աղահեճք ձևով, այսինքն Աղահեճի գավառ, բայց գավառի կենտրոն բնակավայրը չի հիշատակվում, քանի որ, հավանաբար, արդեն գոյություն չի ունեցել: Մենք, հնագիտական նյութով փաստեցինք, որ Միրիկ-1 ամրոցը գոյատևել է մինչև Ք.ա. 6-րդ դար, ինչը ժամանակագրորեն համընկնում է Ռուսա Ա-ի կողմից նվաճման հետ: Մեր համոզմամբ Էթիունիի գոյության ժամանակ խնդրո առարկա ամրոցը եղել է մի հնագույն պետական կազմավորման մայրաքաղաք՝ Աղահեճ անունով: Մայրաքաղաքից անվանումը տարածվել է երկրի վրա որպես Աղահեճի երկիր՝ Աղահեճք: Ռուսա Ա-ի նվաճումից հետո քաղաք-ամրոցը լքվել է և այլևս չի վերականգնվել, բայց անվանումը մնացել է: Ուստի և ավելի ուշ՝ միջնադարում քաղաքը չի հիշատակվում, այլ հիշատակվում է միայն նրա երկիրը՝ որպես Աղահեճք գավառ:

---

[7] **Կարագյոզյան Հ.,** Հայկական լեռնաշխարհը սեպագիր աղբյուրներում, հ. Է, գ. 1, Ե., 1998, էջ 189:

[8] **Ստեփանոս Օրբելյան,** Սյունիքի պատմություն, Ե., 1980, էջ 398:

Այսպիսով, Միրիկ-1 ամրոցի պատմական Աղահեճ անվան վերականգնումը կարելի է ընդունել որպես շատ հավանական իրողություն, քանի որ Միրիկ (Մերիկ) տեղանունը գալիս է ուշ միջնադարից և ավելի վաղ աղբյուրներում չի հիշատակվում:

Աղահեճք երկրի հետ հավանաբար կապ ունի նաև Միրիկ-2 և Միրիկ-4 երկաթեդարյան ամրացված բնակատեղիների միջև վերջերս հայտնաբերված ժայռապատկեր-քարտեզը (նկար 14): Այն գտնվում է ալպյան մարգագետինների ընդարձակ սարահարթի եզրին, Աղահեճ ամրոցից 4.0 կմ հարավարևմուտք (կոորդինատներն են՝ N. 39 39 56,9 E. 46 17 49,7 Alt. 2003 մ) և, ամենայն հավանականությամբ, պատկերում է Աղահեճքի ամառային արոտավայրերի անասնակայանների, ճանապարհների ու ջրագրության քարտեզ-սխեման:

Աղահեճ ամրոցը եզակի հուշարձան է, ուր պահպանված բոլոր ճարտարապետական համալիրները նմանը չունեն Հայաստանի, Հարավային Կովկասի և ամբողջ հետխորհրդային տարածքի հնագույն քաղաքակրթություններում: Կառուցված լինելով երկաթի լայն տարածման ժամանակաշրջանում, այն կրում է Առաջավոր Ասիայի տարբեր ժամանակաշրջաններին ու քաղաքակրթություններին բնորոշ տարրեր, որոնք երբևիցե միասին չեն հանդիպել: Այս արտառոց իրողության ուսումնասիրությունը սենսացիոն բացահայտումներով հղի լուրջ գիտական խնդիր է:

Աղահեճ ամրոցը փայլուն ապագա ունի որպես զբոսաշրջային օբյեկտ: Խելամիտ գովազդելու ու ներկայացնելու պարագայում այն կարող է արդեն այսօր հազարավոր զբոսաշրջիկներ գրավել: Իսկ որոշակի վերականգնման ու զբոսաշրջային ենթակառուցվածքի կազմակերպման պարագայում ամրոցը կարող է դառնալ Հայաստանի ու Արցախի Հանրապետության ամենաայցելվող հուշարձաններից մեկը, ապրանքանիշ:

A NEWLY DISCOVERED FORTRESS AGHAHEJ EDGE IN ARTSAKH AND A ZIKKURAT TEMPLE

KARAPETIAN B., SARGSIAN G., DAVTIAN A.

Summary

The fortress Aghahej (Mirik 1) topping the oblong rocky sleeve at the village Mirik, Kashatagh region of Republic of Artsakh was discovered during the excavations in 2013. The frortress was composed of a citadel on the slopes and a vast necropolis at the foot. The excavations of 2017 confirmed that the frotress existed throughout three centuries since IX-VI BC. The citadel consists of a secular and religious-cultural compound. In the secular compound a dwelling with the stately walls and an inner courtb-"agora" was preserved. The religious cultural section of the compound includes the ruins of the multi-step tower of the temple-zikkurat crowned with an open platform (9.60 x 14.50m. A staircase of 70.0m in length and 8.0m in width inclined at 450 leads to the zikkurattower. The latter like the tower itself is laid down by chipped stones and dry Cyclopian masonry. At the foot of the hill "the oldest road" rimmed in masonry extends to the staircase. The Urartu cuniform data as well as the reference to the medieval authors enables us to restore the satus and ancient name of the fortress as highland city Agha Edgethe center of the "country" or of the medieval region bearing the same name.

НОВОВЫЯВЛЕННАЯ КРЕПОСТЬ АГА'ЕДЖ В АРЦАХЕ И ХРАМ-ЗИККУРАТ

КАРАПЕТЯН Б., САРГСЯН Г., ДАВТЯН А.

Резюме

Крепость Ага'едж (Мирик 1), расположенная на вершине высокого холма в западной части села Мирик Кашатагского района Республики Арцах, была выявлена в результате раскопок в 2013 г. Крепостное строение включало в себя цитадель, поселение на склонах холма и обширный некрополь у

подножья. Проведенные в 2017 г. раскопки подтвердили, что крепость существовала на протяжении трех веков – с IX по VI вв. до н.э. Цитадель состоит из административного и религиозно-культового комплекса. В административном комплексе сохранились помещения с ортостатными стенами и внутренний двор-агора. В религиозно-культовый комплекс входят развалины многоступенчатой башни храма-зиккурата, увенчанной открытой площадкой (9,60 x 14,50 м). С северного подножья холма прямо к башне зиккурата ведет лестничный марш длиной в 70,0 м, шириной – 8,0 м и углом наклона в 45^0. Последний, как и башня, уложен из нетесанных колотых камней сухой, циклопической кладкой. По подножью холма к лестничному маршу тянется древнейшая «дорога во храм», окаймленная каменной кладкой. Данные урартских клинописных источников и средневековых авторов дают возможность восстановить статус и древнее название крепости в качестве стольного города Агаедж, центра одноименной «страны» и средневековой провинции.

NAS RA INSTITUTE OF ARTS AND THE STUDY OF KOMITAS' CREATIVE LEGACY

ASATRYAN A.
instart@sci.am

NAS RA Institute of Arts has provided a valuable contribution to the study of the creative legacy of Komitas. The efforts of several generations of the Institute staff towards the emergence and development of Komitas studies are irrefutable.

1. The academic publication of Komitas' Collection of Works

On September 26, 1949, the day of the 80th anniversary of birth of Komitas, the Armenian SSR Council of Ministers took a decision to publish the academic edition of Komitas' Collection of Works, entrusting the implementation to Armenia Academy of Sciences (AS).

On January 25, 1950, Session 4 of the Presidium of the Academy decides to commence the publication of Komitas' Collection of Works. The editorial staff included Robert Atayan, Mushegh Aghayan, Samson Gasparyan, Christaphor Kushnaryan and Matevos Muradyan. In 1960, the first volume of the Collection with Martiros Saryan's flyleaf came out.

Prior to that, the Section issued Komitas' Ethnographic Collection in 1950[1].

As is known, "the substantial portion of Komitas' 'papers' (the composer's written legacy) were kept in the Patriarchate of Constantinople. Later on they were handed over to the Komitas Commission of Trustees in Paris. Said Commission obtained a number of valuable manuscripts from various individuals

[1] **Կոմիտաս,** Ազգագրական ժողովածու: Հայ ժողովրդական երգեր և պարերգեր, h. II, կազմող՝ Մ. Աղայան, խմբ.՝ Խ. Քուշնարյան, Ե., 1950, 175 էջ, 1 թ. նկ.:

and, upon printing some of the pieces, sent the collected material to Yerevan Museum of Literature and Arts"[2].

The transfer of Komitas' manuscripts to Yerevan was to a greater extent made possible thanks to the efforts of NAS RA Institute of Arts (formerly – the Section of History and Theory of Arts), particularly, its head Ruben Zaryan and scientific secretary Matevos Muradyan.

On December 23, 1953, Session 23 of the Presidium of Armenia Academy of Sciences approved Ruben Zaryan as head of the Section of History and Theory of Arts of the Academy[3]. Shortly, correspondence got underway between R. Zaryan and the Armenian singer (mezzo-soprano), pianist, musicologist and pedagogue Margarit Babayan. Ruben Zaryan later on related that, thanks to it, "the substantial portion of Komitas' archive was received and made available to the Commission (the Komitas Commission of Trustees – A.A.)"[4]. Subsequently, the correspondence with M. Babayan was taken up by Robert Atayan[5].

Thanks to the efforts of several generations of musicologists of NAS RA Institute of Arts, during the following decades (1960–2006) Komitas' Collection of Works came out in 14 volumes, prepared for publication by Robert Atayan and Gevorg Gyodakyan. For the first time ever, Komitas' full musical legacy became available. It included:

Solos (volume 1, 1960, edited by R. Atayan; volume 4, 1976, edited by R. Atayan; volume 5, 1979, edited by R. Atayan);

Choirs (volume 2, 1965, edited by R. Atayan; volume 3, 1969, edited by R. Atayan; volume 4; volume 5);

Piano pieces (volume 6, 1982, edited by R. Atayan);

Patarag [Liturgy] (volume 7, 1997, edited by R. Atayan);

Spiritual compositions (volume 8, 1998, edited by R. Atayan, G. Gyodakyan, D. Deroyan);

---

[2] **Աթայան Ռ.,** Կոմիտասի երաժշտական ժառանգությունը, Կոմիտասական, հ. 1, Ե., 1969, էջ 7:

[3] See: **Ասատրյան Ա.,**ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտ – 50, Ե., 2010, էջ 31:

[4] **Զարյան Ռ.,** Մարգարիտ Բաբայան, Մայրամուտից առաջ, Ինքնապատում, հատոր երրորդ, Ե., 2012, էջ 335:

[5] See: **Կոստանդյան Ն.**, Մարգարիտ Բաբայանը և Կոմիտասի երկերի ժողովածուի ակադեմիական հրատարակությունը (Կանթեղ, 2016, № 1, էջ 219–233):

Musical ethnographic legacy in volumes 9–14: volume 9, Armenian folk songs, Book A, 1999, compiled, edited and commented by R. Atayan; volume 10, Armenian folk songs, Book B, 2000, compiled, edited and commented by R. Atayan; volume 11, Armenian folk songs, Book C – “Ethnographic Collection”, part 1, 2000, compiled, edited and commented by R. Atayan; volume 12, Armenian folk songs, Book D – “Ethnographic Collection”, part 2, 2003, compiled and commented by R. Atayan, editors R. Atayan, G. Gyodakyan; volume 13, Armenian folk songs, Book E, Collection of Folk Songs (“Contrapuntal”), facsimile edition, 2004, compiled and commented by R. Atayan, editors R. Atayan and G. Gyodakyan; volume 14, Armenian folk and ashugh songs, tunes, Turkish songs, Kurdish songs and tunes, 2006, compiled and commented by R. Atayan, editors R. Atayan and G. Gyodakyan.

The academic publication of Komitas’ Collection of Works was a phenomenon of great strategic importance and of exclusive significance for the musical life of Armenians worldwide.

2. Scientific Studies

Valuable contributions to Komitas studies are such research works as: the studies “Komitas” (2000), “Komitas” (1969) and “Komitas” (2014) by Gevorg Gyodakyan; the monographs “Komitas” (1992) by Ruben Terlemezyan and “The Early Period of Komitas’ Creative Work (1891–1899)” (2014) by Tatevik Shakhkulyan, as well as the research articles and presentations by Matevos Muradyan, Robert Atayan, Gevorg Gyodakyan, Karineh Khudabashyan, Anahit Grigoryan, Anna Arevshatyan, Anahit Baghdasaryan, Tatevik Shakhkulyan and others. Incidentally, in 2011, the series of articles by the young researcher T. Shakhkulyan was awarded “The Best Research Work” Prize of NAS RA in the Arts, Language and Literature category.

The three pillars of Komitas studies conducted at NAS RA Institute of arts are worth to be singled out: the academic efforts by Matevos Muradyan, Robert Atayan and Gevorg Gyodakyan promoted the advancement in the field.

Matevos Muradyan was first heard of in 1950, when his article “The Place and Significance of Komitas in the History of Armenian Music”[6] appeared in the

[6] **Մուրադյան Մ.**, Կոմիտասի տեղն ու նշանակությունը հայկական երաժշտության պատմության մեջ, Տեղեկագիր, 1950, № 11, էջ 31–46:

Arm. SSR AS Bulletin, Issue 11. It was timed to commemorate the 15th anniversary of the composer's death[7].

M. Muradyan was the first to publish in Armenia Komitas' letters to Arshak Chopanyan (Historical-Philological Journal, 1958, N 1)[8]. The letters covering the period from 1902 to 1914 shed new light on Komitas' creative and musical-social activity, gave detailed description of his political beliefs and views on the national-liberation movement of the Armenian people against Sultanic Turkey. They also reflect Komitas' hopes for the liberation of the Armenian people – related with the Russian revolution. M. Muradyan supplemented the letters with corresponding brief comments.

Years after, in 1969, M. Muradyan examined Komitas' letters to Arshak Chopanyan and Margarit Babayan, basing on which he put forward "some important issues related with Komitas' life, activity and oeuvre"[9].

M. Muradyan returned to Komitas in 1969, the year of the composer's centennial anniversary. His article "Komitas' Last Visit to Armenia" came out in the Historical-Philological Journal, N 4[10]. "Komitas' last visit to Armenia proved very fruitful. During two months he worked in matenadaran, the manuscript library, made tours of various districts and villages, communicated with his compatriots, heard and recorded songs of rural Armenians, saw with his own eyes the situation in Ejmiatzin Holy Cathedral, met with some of his friends and relations, found answers to many questions of great interest to him, such as – whether any changes for the better happened, whether the situations favored his return, whether his return would be welcomed by the spiritual authorities. The answers were in the negative. Komitas set out for a journey back to Constantinople never to return. It was only 23 years after that his body was brought to Armenia as priceless and sacred remains. The composer was buried in the Republic Pantheon to mingle with the soil of his homeland".

---

[7] The research papers printed in the AS journals are covered below.

[8] **Մուրադյան Մ.,** Կոմիտասի անտիպ նամակները (ՊԲՀ, 1958, 1, էջ 245–267):

[9] See: **Մուրադյան Մ.,** Կոմիտասի նամակները (ԼՀԳ, 1969, № 11, 35–42):

[10] **Մուրադյան Մ.,** Կոմիտասի վերջին այցելությունը Հայաստան (ՊԲՀ, 1969, № 4, էջ 61–69):

In the year of the composer's centennial jubilee, Matevos Muradyan's two articles –"Yekmalyan's Patarag as Evaluated by Komitas"[11], and "Komitas' Plans to Develop National Musical Talents" – were printed in the first volume of The Komitassiad[12].

Ten years after, in 1979 and 1980, M. Muradyan's series of articles, dedicated to the 110th anniversary of birth of the composer, entitled "Komitas' Activity in Constantinople", appeared in the Historical-Philological Journal[13].

Another decade passed, and in 1989, by the decision of the Scientific Board of the Arm. SSR AS, the publishing house of Armenia Academy of Sciences released M. Muradyan's monograph "Outlines of the History of Western Armenian Music in the XIX – early XX centuries". In Part 2 – "Western Armenian Music in the First Decades of the XX Century" – Paragraph 2 of Chapter 1 is entitled "Komitas' Activity in Constantinople"[14]. The next paragraph examines the activities of Komitas' pupils[15]; Paragraph 2 of Chapter 2 – "Folk Music" – offers the analysis of Komitas' musical and ethnographic legacy[16].

Prior to that, in 1970, Chapter 2 – "Komitas and Formation of Armenian Classical Music" – in Part 2 of the monograph "Outlines of the History of Western Armenian Music in the XIX – early XX centuries" – the author described the composer's path of life and worldviews, examined his oeuvre, musical ethnographic legacy, musicological investigations and performing art[17].

In the second volume of The Komitassiad, M. Muradyan's "Komitas and

---

[11] **Մուրադյան Մ.,** Եկմալյանի Պատարագը Կոմիտասի գնահատությամբ, Կոմիտասական, հ. 1, Ե., 1969, էջ 218–229:

[12] **Մուրադյան Մ.,** Ազգային երաժշտական ուժերի պատրաստման կոմիտասյան ծրագրերը, Կոմիտասական, հ. 1, Ե., 1969, էջ 230–239:

[13] **Մուրադյան Մ.,** Կոմիտասի գործունեությունը Կոստանդնուպոլսում (Ծննդյան 110-ամյակի առթիվ) (ՊԲՀ, 1979, № 4, էջ 14–24): **Մուրադյան Մ.,** Կոմիտասի գործունեությունը Կոստանդնուպոլսում (ծննդյան 110-ամյակի առթիվ) (ՊԲՀ, 1980, № 1, էջ 115–125):

[14] **Մուրադյան Մ.,** Ուրվագիծ արևմտահայ երաժշտության պատմության (XIX դար և XX դարասկիզբ), Ե., 1989, էջ 236–267:

[15] Ibid, pp. 267–277.

[16] Ibid, pp. 287–291.

[17] **Մուրադյան Մ.,** Հայ երաժշտությունը XIX դարում և XX դարասկզբում, Ե., 1970, էջ 406–510:

Presentation of Armenian Music in Europe" was printed (1981)[18].

Robert Atayan's article "The Principle of Folk Song Harmony in Komitas" was the researcher's first experience in analyzing some problems of Komitas' musical style. The article was published in 1949, Issue 9 of the Arm. SSR AS Bulletin[19].

The article "Komitas' Musical-Ethnographic Legacy", printed in 1969, Issue 2 of the Historical-Philological Journal[20], gave a holistic picture of the 8 collections of the formerly unknown and only recently discovered folk songs, put on paper by Komitas. They are kept in the Komitas archive.

Within the framework of celebrations of the 100th anniversary of birth, R. Atayan took up several issues of Komitas' creative legacy[21]. Having prioritized the principal problems of Komitas studies, such as finding the composer's works, specifying the time of their creation and tracking the process of shaping of his style, the researcher justly observes that the investigation of the newly discovered rural songs and the long known arrangements revealed a full picture of emergence and development of the stylistic features of Komitas' creation. From this perspective, harmonization (polyphonic arrangement) of the songs becomes an issue of primary importance. Concurrently, R. Atayan made the topic of Armenian urban folk song in Komitas' oeuvre a subject of another research work[22].

R. Atayan also referred to the years of study in Berlin, which turned out to be a major period in Komitas' creative career[23]. Basing on archive documents, the scholar offered a detailed account of the courses Komitas attended.

[18] **Մուրադյան Մ.,** Կոմիտասը և հայ երաժշտության ցուցադրումը Եվրոպայում, Կոմիտասական, հ. 2, Ե., 1981, էջ 15–24:

[19] **Աթայան Ռ.,** Ժողովրդական երգի ներդաշնակության սկզբունքը Կոմիտասի մոտ (ՀՍՍՀ ԳԱ Տեղեկագիր, 1949, № 9, էջ 87–113):

[20] **Աթայան Ռ.,** Կոմիտասի երաժշտական-ազգագրական ժառանգությունը (ՊԲՀ, 1969, № 2, էջ 43-62):

[21] **Աթայան Ռ.,** Կոմիտասի ստեղծագործական ժառանգության մի քանի հարցեր (ՊԲՀ, 1969, № 4, էջ 15–29):

[22] **Աթայան Ռ.,** Հայ քաղաքային ժողովրդական երգը Կոմիտասի ստեղծագործության մեջ (ԼՀԳ, 1969, № 11, էջ 27–34):

[23] **Աթայան Ռ.,** Կոմիտասի ուսումնառությունը Բեռլինում (ՊԲՀ, 1980, № 2, էջ 48–59):

The first volume of The Komitassiad begins with R. Atayan's informative article "Komitas' Musical Legacy"[24]. The author described and evaluated the materials, specifically, the recordings of folk songs and musical pieces, contained in the Komitas fund at the Charents Museum of Literature and Arts, as well as published some newly found and deciphered originals.

The second volume of The Komitassiad included two articles by R. Atayan: "A Rough Version of Komitas' Opera "Anush""[25], and "Elements of Polyphony in Armenian Folk Music"[26].

Promising was **Gevorg Gyodakyan's** entry to Komitas studies, marked by release of the monograph "Komitas" [Rus.] in the year of the 100th anniversary of the composer's birth.

The Historical-Philological Journal, Issue 4, 1969, included G. Gyodakyan's article "Komitas and the World Musical Art" [Rus.][27], where he wrote, "Komitas came onto the creative arena when music art had a hard time, many traditional beliefs had turned upside down, when *novel* was not always a synonym for *progressive*, and the quests for novel were often formal and self-sufficing. Komitas' principles of organizing musical material arose from the desire to penetrate into folk art as deep as possible, express the gist of folk music as full and accomplished as possible. History proved that it was one of the most efficient ways of true renewal of music art of our times".

G. Gyodakyan's "Komitas' Style and the XX Century Music" published in the first volume of The Komitassiad, did not remain unnoticed[28]. The author concluded the article as follows, "Komitas' innovative principles are quite obvious. They show not only within the framework of Armenian national music, but, to a greater scale, in the perspectives of the world music art. First and foremost, Komitas is great because he was able to elevate the solutions of the most topical

---

[24] **Աթայան Ռ.,** Կոմիտասի երաժշտական ժառանգությունը, Կոմիտասական, հ. 1, Ե., 1969, էջ 7–83:

[25] See: **Աթայան Ռ.,** Կոմիտասի «Անուշ» օպերայի ուրվագրերը, Կոմիտասական, հ. 2, Ե., 1981, էջ 42–82:

[26] **Աթայան Ռ.,** Բազմաձայնության տարրերը հայ ժողովրդական երաժշտության մեջ, Կոմիտասական, հ. 2, Ե., 1981, էջ 143–157:

[27] **Геодакян Г.** Комитас и мировое музыкальное искусство (ՊԲՀ, 1969, № 4, էջ 70–82):

[28] **Գյոդակյան Գ.,** Կոմիտասի ոճը և քսաներորդ դարի երաժշտությունը, Կոմիտասական, հ. 1, էջ 84–120:

problems of own, national culture to the level of solutions of the problems of the XX century world music art. He did not just rely on the experience and attainments of his predecessors, but he belonged in the ranks of those who laid the foundation for the entirely novel musical thinking"[29].

Studying Komitas' legacy became G. Gyodakyan's lifetime devotion. The first volume of "The Renowned Seminarians" included an article about Komitas, also authored by G. Gyodakyan[30]. One of the essays in the monograph "Paths of Formation of Armenian Classical Music"[31] tells about Komitas. The publication of the research work in English about Komitas became G. Gyodakyan's *swan song*.

3. The Komitassiad

NAS RA Institute of Arts realized publication of research on some issues of Komitas' legacy in the two volumes of The Komitassiad (1969, 1981).

In 1969, within the framework of the 100th anniversary of the composer's birth, by the decision of the Scientific Board of the Institute of Arts of Arm. SSR Academy of Sciences, the affiliated publishing house issued the first volume of The Komitassiad under the editorship of Robert Atayan. The editorial team included Robert Atayan (chief editor), Gevorg Gyodakyan, Nikoghos Tahmizyan, Levon Hakhverdyan and Matevos Muradyan.

"Komitas' extensive legacy in its every aspect – musical ethnography, creative work, scientific studies, performing art, as well as his activities in the social and enlightenment spheres – is of great scientific, historical and theoretical interest. Along with the publication of the great musician's Collection of Works, AS Institute of Arts initiated by the said volume the issuance of scientific studies of certain aspects of the composer's legacy. Volume A of The Komitassiad, timed to the centennial anniversary of Komitas' birth, mainly covers theoretical investigation of the composer's musical and scientific works, of his creative style and interpretation of compositions. Such volumes with a more extensive involvement of authors and material will periodically appear in the future as well"[32].

---

[29] Ibid, pp. 119–120.

[30] **Գյոդակյան Գ.**, Տ. Կոմիտաս վարդապետ, Նշանավոր ճեմարանականներ, Պրակ Ա, Մայր Աթոռ Ս. Էջմիածին, 2005, էջ 315–324: See also: **Գյոդակյան Գ.,** Հայ երաժշտության հանճարը, էջեր հայ երաժշտության պատմությունից, Ե., 2009, էջ 73–84:

[31] See: **Геодакян Г.** Стиль Комитаса и музыка XX века. Пути формирования армянской музыкальной классики, Е., 2006, с. 96–129.

[32] Ինստիտուտի կողմից, Կոմիտասական, հ. 1, Ե., 1969, էջ 5:

In 1981, by the decision of the Scientific Board of the Arm. SSR Academy of Sciences Institute of Arts, the second volume of The Komitassiad came out. It contains articles and researches on Komitas' life, activity and oeuvre, as well as publications of the composer's written legacy – from opera "Anush" and the collection of spiritual songs of 1893[33].

The year 2019 marks the 150th birth anniversary of Komitas. NAS RA Institute of Arts is planning to hold a scientific session dedicated to the great event, and to publish the third volume of The Komitassiad.

4. Komitas' Scientific Biography

Back in 1973, studying of Komitas' scientific biography was prioritized in the "20 Year Perspective Plan of the Scientific Research Work at the Institute of Arts". Komitas' scientific biography, prepared by Khachik Samvelyan, appeared in fragments in several issues of the "Sovetakan arvest" [Soviet Art] and "Ejmiatzin"; of late, a comprehensive album dedicated to Komitas came out in Armenian and English translation; the compilers, however, failed to mention the name of NAS RA Institute of Arts…

In conclusion, we can state that, for decades, NAS RA Institute of Arts has invariably been the center of Komitas studies.

ՀՀ ԳԱԱ ԱՐՎԵՍՏԻ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ՆԵՐԴՐՈՒՄԸ ԿՈՄԻՏԱՍԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ

ԱՍԱՏՐՅԱՆ Ա.

Ամփոփում

Ծանրակշիռ է ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտի ներդրումը Կոմիտասի ստեղծագործական ժառանգության ուսումնասիրության գործում: Հատկապես պետք է նշել.

[33] We do not proceed to the detailed analysis of The Komitassiad volumes, since it has already been done by Lusineh Sahakyan, Head of the Chair of Music History at Komitas Yerevan State Conservatory, in her research "Komitas studies in Armenian musicology". See: **Սահակյան Լ.,** Կոմիտասագիտությունը հայ երաժշտագիտության մեջ, Ե., 2010:

1. Կոմիտասի Երկերի ժողովածուի ակադեմիական հրատարակությունը (1960–2006),
2. Գիտական ուսումնասիրություններ՝ Գևորգ Գյոդակյանի «Կոմիտաս» (2000), «Комитас» (1969) և «Komitas» (2014), Տաթևիկ Շախկուլյանի «Կոմիտասի ստեղծագործության վաղ շրջանը (1891–1899)» (2014) մենագրությունները, ինչպես նաև Մաթևոս Մուրադյանի, Ռոբերտ Աթայանի, Գևորգ Գյոդակյանի, Կարինե Խուդաբաշյանի, Աննա Արևշատյանի, Անահիտ Բաղդասարյանի, Տաթևիկ Շախկուլյանի և այլոց գիտական հոդվածները:
3. «Կոմիտասականի» երկու հատորները (1969, 1981),
4. Կոմիտասի գիտական կենսագրությունը (2015):

ВКЛАД ИНСТИТУТА ИСКУССТВ НАН РА В ИЗУЧЕНИЕ ТВОРЧЕСКОГО НАСЛЕДИЯ КОМИТАСА

АСАТРЯН А.

Резюме

Весьма весомым является вклад Института искусств НАН РА в изучение творческого наследия Комитаса. В результате многолетних скрупулезных научных исследований коллективом научных сотрудников института были подготовлены и изданы следующие работы:

1. Академическое издание Собрания сочинений Комитаса.
2. Научные исследования: монографии«Կոմիտաս» (2000), «Комитас» (1969) и «Komitas» (2014) Геворка Геодакяна, «Ранний период творчества Комитаса (1891–1899)» (2014) Татевик Шахкулян, а также научные статьи Матевоса Мурадяна, Роберта Атаяна, Геворка Геодакяна, Карине Худабашян, Анны Аревшатян, Анаит Багдасарян, Татевик Шахкулян и других.
3. Два тома «Комитасакана» (1969, 1981).
4. Научная биография Комитаса(2015).

ԲԱՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ
PHILOLOGY

ԱՎ. ԻՍԱՀԱԿՅԱՆԻ «ԱԼԱԳՅԱԶԻ ՄԱՆԻՆԵՐ» ՊՈԵՄԸ

ԶԱՔԱՐՅԱՆ Մ.
zaqaryan.m4@gmail.com

Ավ. Իսահակյանի առաջին՝ «Երգեր և վերքեր» ժողովածուում տեղ գտած «Ալագյազի մանիներ» պոեմի մտահղացման մասին 1893 թ. պատանի բանաստեղծը «Հիշատակարանում» գրում է. «Կիսատ մի պարբերություն գրեցի «Հյուրի-փերի» բալլադից. հույս ունեմ, որ սա շատ լավ դուրս կգա: Երեկ գրեցի, այսինքն գրի առա բավական ժողովրդական «մանի, յայլի, ջան-գյուլում»-ներ. ես՝ շատ եմ սիրում այդ պարապմունքը»[1]: Չորս օր անց նա շարունակում է. «Երեկ վերջացրի «Հյուրի-փերիս». ահագին բան եղավ և բավական լավ է թվում. թեև համեմատած «Демон»-ի և «Пери»-ի (Թ. Մուր) <հետ> …կոպեկ չարժե» (Հ,44): Եթե գրողի այս գրառումներին մտովի հավելենք սեփական գրական նախասիրությունների մասին ինքնախոստովանանքը («Իմ մանկության ժամանակ՝ 80-ական թվականներին…խորին տպավորություն է թողել իմ վրա մեր ժողովրդական երգը, գեղջկական երգը…»)[2], ապա հասկանալի են դառնում «Ալագյազի մանիներ» պոեմի ոչ միայն ազգային, այլև համաշխարհային ստեղծագործական նախահիմքերը: «Ալագյազի մանիներով» Ավ. Իսահակյանը զբաղվել է շուրջ քսան տարի (1895–1917): Պոեմի առաջին՝ «Իմ բախտին» բանաստեղծության քնարական հերոսի տրամադրությունը, անպատասխան սիրո պատճառած անսփոփ վիշտը, հուշում է ստեղծագոր-

[1] **Իսահակյան Ավ.,** Հիշատակարան (այսուհետև՝ Հ.), Ե., 1977, էջ 42:

[2] **Իսահակյան Ավ.,** Երկերի ժողովածու վեց հատորով (1973–1979). հ. 6, Ե., էջ 333: Այսուհետև այս հրատարակությունից արվող մեջբերումների հատորը (հռոմեական թվերով և էջերն արաբական) կնշվեն բնագրին կից:

ծության հետագա շարադրանքը, ուր գրողը քննության է ենթարկում մարդ էակի ամենաբարձր արժեքը՝ սիրո վեհ զգացումը: Իսկ արդեն «Նախերգում» հերոսը, սիրած աղջկան՝ «մարմար Զարոյին» հրավիրում է ոչ թե անանձնության մեջ, այլ շքեղաշուք ու երազային բնության՝ Ալագյազի գրկում իրենց սերն ըմբոշխնելու: Ավ. Իսահակյանը վրձնում է կատարյալ, անեղծ բնության ոգեշունչ պատկերը՝ Արագած լեռը, ասես Արամազդ աստծո վեհանիստ գահը, պոեմի հերոսները գնում են վայելելու իրենց սերը նրա պերճ շուքի տակ՝ աստվածներին ու սրբություններին մոտ: Թվում է՝ պանթեիստ Ավ. Իսահակյանի ամենակատարյալ բնանկարն է սա, որը վավերացնում է Հայաստանի բնության հրաշք գեղեցկությունը.

Դու, Արագա՛ծ, ալմաստ վահան,
Կայծակեղեն թրերի,
Գագաթներդ՝ բյուրեղ վրան
Թափառական ամպերի (II, 9):

Պոեմի հերոսը՝ ճակատին աստղեպսակ, թռչում է «ալմաստ, վահան» լեռան, լույս-փիրուզ լճակների[3], շքեղաշուք մայր բնության գիրկը՝ հրաշք գեղեցկության մեջ վայելելու իր նորաբողբոջ սերը: Այստեղ էլ նա հաղորդակցվում է բնությանը՝ պատրաստ լսելու դյութական աշխարհների, հուր-հավքերի մասին դյութող ու կախարդող հեքիաթը[4] («Մանթաշին»), իսկ ալմաստ առուն, «մոր պես արթուն», նրան մանկության քաղցր օրոր է շշնջում: Բանաստեղծն ասես հեթանոս ժամանակների անեղծ ու կատարյալ բնությունն է վրձնում, որը «…միշտ առաջին պլանում է, ի տարբերություն միջնադարի և նոր ժամանակների»[5]: Ահա և Զարոն՝ սափորը ուսին ջրի գնալիս. սա սիրած աղջկա հետ առաջին հանդիպումն է: Ջուրը, որ լիության, առատության խորհրդանիշ է, այստեղ առնչվում է քրիստոնեական ավանդության հետ. Սուրբ Սարգսի օրը երազում սիրած էակին ջուր տալը միաժամանակ սիրո պարգև է խորհր-

---

[3] Հեթանոս հայերին բնորոշ լեռան և ջրի պաշտամունքը բնորոշ է եղել նաև աշխարհի բազմաթիվ ժողովուրդներին: Այսպես, չինական գեղանկարչության մեջ միջին դարերում լայն տարածում է գտել «Շան-շույ» կոչվող ժանրը, որ թարգմանվում է «լեռներ և ջրեր» (Культурология, история мировой культуры, М., 1995, с. 53):

[4] Թերևս հրաշք բնության նման պատկերներն են հիմք հանդիսացել XVI դ. հոլանդացի մեծ նկարիչ Պ. Բրեյգելի՝ «Մարդկայինն է ոչ միայն մարդը, այլ բնությունը» կենսափիլիսոփայության համար: **Гершензон-Чегодаева Н.М.** Брейгель Питер старший, М., 1983, с. 103.

[5] Античность как тип культуры, М., 1988, с. 16.

դանշում, և այս մտայնությամբ էլ հյուսված է գեղեցիկ Զարոյին ուղղված ձոնը: Զարոյի գեղեցկությունը գովերգելով՝ պատանին նրա սերն է նվաճում, և աղջիկը, որպես սիրո առհավատչյա, նրան համբույր է պարգևում: Սիրած էակի համբույրից խենթացած պատանին սիրո ձոն է երգում համբույրի ոգեշունչ, արարող զորության մասին: Նա չի ուզում այդ համբույրը մենակ վայելել, ցանկանում է այն պարգևել աշխարհի մարդկանց, որպեսզի նրա «հոտն ու բույրը» հայտնի դարձնի սիրակարոտ սրտերին՝ նրանց հոգիներն ամոքելու համար: Խենթ սիրահարը կամենում է, որ ողջ աշխարհը ըմբոշխնի այդ համբույրը.

Էդ համբույրեն մի հատ էլ տո՛ւր,
Տանիմ աշխարհիս ման տամ,
Ինչքան դառն սրտեր տեսնեմ՝
Տամ, հոտն առնին, անուշնան (II, 17):

Ողջ բնությունն է ձայնակցում նրանց սիրուն, արդեն այս համընդհանուր հենքի վրա Զարոն ներկայանում է ոչ թե իբրև սիրո անհաս ցնորք ու երազ, այլ իրական-շոշափելի, զգայական ու հասանելի էակ: Պատանի սիրահարի համար գիշերն ու ցերեկը դառնում են սիրո անանց, կախարդական մի հեքիաթ: Կյանքն ունայն է. իրականը մարդն է՝ իր մեծ ու երազային սիրով: Սիրո վայելքն էլ բանաստեղծը վրձնում է պերճ բնության գրկում: Զարոն իր գրկում, շքեղաշուք բնաշխարհի մեջ էլ սիրահար պատանին վայելում է իր երկրային մեծ սերը.

Մենք թևանցուկ, զվարթադեմ
Զառ ծաղկունքով զարդարուն
Ուրախ, կայտառ և սիգաճեմ
Ճեմում էինք…
Մոռացանք վիշտ, ողբ, թախիծ, կական…[6]

Սիրո այս երգով պոեմն ասես նոր բովանդակություն է ձեռք բերում. եթե մինչ այդ մարդը բնության հետ միաձույլ էր ու ներդաշնակ, ապա «Բ երգից» սկսած՝ այդ հարաբերակցությունը խախտվում է. պատանին թախանձագին աղաչանքով է դիմում աշխարհին, որ իր սիրուն արգելք չլինեն: Բնությունը փոխում է իր որակը, և պատանին խնդրում է փրփուր կտրած առվին, փուշ ու մացառին, որ թույլ տան գա իր գիրկը սիրելին: Թվում է՝ բնության խոչընդո-

[6] Ե. Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարան (այսուհետև՝ ԳԱԹ), Ավ. Իսահակյանի արխիվ, № 1, էջ 29:

տող տարրերի պատկերումը հավաստում է, որ պատանին սիրո երազային-հեքիաթային աշխարհից աստիճանաբար վերադառնում է դեպի երկիր՝ իրական-ռեալ հողագունդ: Մարդը բնությամբ պայմանավորված էակ է, և կյանքում կան իրողություններ, հանգամանքներ, իրադարձություններ, որոնց առջև նա տկար է ու անզոր: Այս են հավաստում պոեմի հետևյալ տողերը.

Ետ գնացե՛ք, քար ու քռա,
Վարդեր, ճամփա ցույց տվեք,
Փուշ ու մացառ, մեկդի քաշվեք,
…Թողեք Զարոն գիրկս գա (II, 20):

Իր և Զարոյի զգացմունքի հենքի վրա էլ գրողը պատկերում է սիրած էակի հուզական ներաշխարհը (Բ, II): Մինչ սիրահար պատանին ցնորք-երազ երգով փառաբանում է բնության ամենաբարձր կատարելությանը՝ Զարոյին, աղջիկը նրան պատմում է կապուտաչյա լճակի կողքին՝ լացող ուռենու տակ թաղված սիրահարների ողբերգական անցքի մասին («Լճակի փերին»): Լճակի փերու կերպարը հանդիպում է Ավ. Իսահակյանի վաղ տարիների բանաստեղծություններում: 1892 թ. նա գրի է առել Շիրակի մի ավանդավեպ, որը հետագայում վերնագրել է «Իմ փերի»: Փերին այստեղ սև մազերով է, մինչդեռ հայտնի է, որ նա դեղին, ոսկեզօծ մազերով է լինում («Լորելայ»). փերու ողբերգական ճակատագրի մասին պատմության վերհուշը, սակայն, չի տրտմեցնում սիրահարներին. նրանք շարունակում են իրենց սերը վայելել.

Գլուխս դրած ծնկիդ վրան,
…Փունջ ծամերդ ծուփի նման
Ճակտիս վրա կըփռվին (I, 25):

«Գ երգը» բանաստեղծական ուրույն և ինքնատիպ տրամադրությամբ է ներկայանում: Եթե «Նախերգանքում», «Ա և Բ երգերի» բանաստեղծություններում գործողությունների սկիզբն է զարգանում՝ բնության զարթոնք ու գեղեցկություն, սիրահար պատանու խենթ արբեցում, սիրո զմայլանք, ապա «Գ երգից» և նրա մասը կազմող ստեղծագործություններից սկսած՝ սիրուց լիացած օրն ավարտվում է, և սիրո վայելքից արբած բնությունը նինջ ու անդորր է ապրում: Հոգնել է նաև «շող մատներով» խենթ պատանու «սրտի հետ» խաղացող էակը. «…եղնիկի պես թևիս տակին կուչ է եկել»: Բնության հանգիստն ու անդորրը պոեմում նորացման, արարման վկայությունն է: Շրջապատի այս խաղաղության մեջ էլ հերոսը ցանկանում է լսել Զարոյի երգը, և վերջինս պատանու համար հյուսում է ի՛ր սիրո երգը, որը նա երկրային ոչ մի արժեքի հետ

չի համեմատում. այդ չափումները միայն երկնային են՝ «լույս-արև, լույս աշխարհներ զառ գոհարի»: Թերևս այս է պատճառը, որ երկնային գոհար գտին նվիրելուց հետո, ըմբռնելով իր սիրո մեծությունը, նաև՝ վերերկրայնությունը, աղջիկը շոշափելի, առարկայական ձևով է ասելիքն ավարտում.

Թո՛ղ հյուսերս քանդեմ, տղա՛ս,

Կրծքիդ վրա թել-թել անի…(I, 28):

Զարոն էլ իր հերթին, սիրո անուրջներում, որպես հավերժական սիրո խոստում ու երդում, հեքիաթ է պահանջում սիրած տղայից, և ծայր է առնում «Գ երգի» VI մասը՝ «Հեքիաթը», որի հերոսը կտրիճ իշխանազունն է: Որսի դուրս եկած քաջ երիտասարդը, չքնաղ հովվուհու գեղեցկությամբ գերված, նրան իր սերն է խոստովանում: Սիրուց արբած ասպետի զգացմունքները մնում են անպատասխան, քանի որ «եղնիկ-աղջկան» չեն գրավում թագն ու գահը. նա քաջ հովվի հարսն է: Հովվուհին այստեղ ներկայանում է սիրո բարձրագույն արժեքով. նա բնության զավակ է և չի գայթակղվում սիրուց խենթացած երիտասարդի խոստումներով: Սիրահար իշխանազունն էլ ի՛ր սիրո ձոնն է հնչեցնում.

– Ապրանքս այս խրճիթն է այսուհետ,

Ու իմ բախտը՝ այս աղջկա ձեռներում.

…Սիրակարոտ այստեղ նստիմ, կըսպասեմ,

Մինչև որ ինձ այս աղջիկը մեղքանա…(II, 32):

Սիրահար ասպետը հրաժարվում է բարեկեցիկ կյանքից, որոշում ապրել բնության գրկում՝ աղջկա խրճիթի կողքին՝ հուսալով հրաշք աղջկա սերը: Հեքիաթը, ավա՜ղ, չի ավարտվում և ոչ միայն այն պատճառով, որ օրվա իրադարձություններից հոգնած Զարոն քուն է մտնում, այլ՝

Սիրո հեքիաթը վերջ չո՛ւնի…(II, 33):

Օրագրային վաղ տարիների գրառումներից մեկում, ինչպես նշվեց, Ավ. Իսահակյանը իր «Հյուրի-փերին» համեմատում է անգլիացի բանաստեղծ Թ. Մուրի «Լալա Ռուքի»[7] երկրորդ պոեմի՝ «Փերի և հրեշտակ» ստեղծագործության հետ, և այդ հոգեհարազատությունը ներկայանում է հատկապես «Հեքիաթում»: Թ. Մուրի պոեմը ազատության և անդավաճան սիրո ձոներգ է: Ազա-

[7] Գրականագետ Ա. Մուշեղյանի հավաստմամբ՝ Ավ, Իսահակյանը ծանոթ էր պոեմի՝ Ն. Գերբելի կազմած «Английские поэты в биографиях и образцах» ժողովածուից: «Լալա-Ռուքը» թարգմանել էր Վ. Ժուկովսկին (**Մուշեղյան Ա., Իսահակյան Ավ.,** Վաղ տարիներ, 1875–1898, Ե., 1983, էջ 43):

տության պայքարում զոհված սիրած տղամարդու մահվանն ականատես աղջիկն ինքնասպան է լինում նրանից չբաժանվելու համար.

Скончала смерть его страданье.

И дева, другу дав лобзанье

С последним всей любви огнем,

Сама за ним в лобзанье том

Желанной смертью умирает.[8]

Այսօրինակ սերը Ավ. Իսահակյանի երազանքն էր, որը և նա մարմնավորել է «Հավերժական սերը» ստեղծագործության մեջ: Ուշագրավ է, որ Ջ. Բայրոնը, անդրադառնալով Թ. Մուրի արևելյան պոեմին, հավաստում է, որ ոչ մեկը նրանից լավ Արևելքը նկարագրել չի կարող և քննելով պոեմի հերոսների զգայական աշխարհը՝ շարունակում. «...այրող, կրքոտ, բորբոքուն ոգի...գեղեցկություն և նրբություն, ինչը բնորոշ է նաև նրա (Արևելքի – Մ. Զ.) դուստրերին»[9]: Հարկ է կարծել, որ պոեմում թերևս հենց այս հանգամանքն է գրավում պատանի Ավ. Իսահակյանին: Հաջորդ ստեղծագործությունը, որի հետ նա համեմատում է իր «Հյուրի-փերին», Մ. Լերմոնտովի «Դևն» է: Աստծո դեմ ըմբոստացած և գետին տապալված հրեշտակի մասին առասպելը զբաղեցրել է համաշխարհային գրականության ականավոր շատ դեմքերի՝ Ջ. Միլտոն, Ջ. Բայրոն, Գյոթե, Ա. դը Վինի, Ա. Պուշկին: Լերմոնտովյան «Դևի» ֆաբուլայում ասես ներհյուսված է և՛ հեթանոս մտայնությունը (աստվածներն իջնում են երկրային գեղեցկուհիների մոտ), և՛ քրիստոնեական-միջնադարյանը (սատանան գայթակղում է միանձնուհուն). «...այս վերջինն ավելի մոտ է լերմոնտովյան թեմային»[10]: Երկնքի հետ «հպարտ թշնամություն» ունեցող հրեշտակին միայն սերը կարող էր հետ պահել չարիք գործելուց, ինքնամաքրման մղել նրան, և պատանի Ավ. Իսահակյանի խոհերը թևածում են վերերկրային, վեհ և ամենակարող սիրո աներևակայելի, հրաշագործ, զորության շուրջ.

Хочу я с небом примириться,

Хочу любить, хочу молиться,

Хочу я веровать добру[11].

---

[8] **Мур Т.** Избранное, М., 1981, с. 397.

[9] The Poetical Works of Thomas Moore, Vol. 3, Paris, 1829, p. 164.

[10] Лермонтовская энциклопедия, М., 1981, с. 135.

[11] **Лермонтов М.Ю.** Избранные произведения в двух томах, т. 1, М., 1963, с. 552. Այլ դեպքում պոեմում Մ. Լերմոնտովը Թամարին «փերի» է անվանում.

Լերմոնտովյան մեկնության համաձայն, թվում է, գգվանքի ու սիրո բացակայությունն է Դևին դարձրել դաժանության և չարության մարմնացում: Ահա և Մ. Լերմոնտովի վրձնած սիրակորույս տղամարդու՝ բոլոր ժամանակների համար արդիական կերպարը, որում արտաքին-ֆիզիկականը՝ հոգևորի հայելին է.

Каким смотрел он злобным взглядом,

Как полон был смертельным ядом

Вражды, не знающей конца,

И веяло могильным хладом

От неподвижного лица[12].

«Ալագյազի մանիներ» պոեմի՝ «Դ երգում» բացվող օրն իր հետ բերում է մարդկային հարաբերությունների նոր որակ. եթե մինչ այդ առաջին պլանում Զարոյի և պատանու անվրդով սիրո պատկերն է, ապա «Դ երգից», այդ սիրո հեքիաթի հենքը որոշակի փոփոխության է ենթարկվում. ավելանում են կյանքին, կենցաղին, սովորույթներին առնչվող մանրամասներ: Այստեղ է, որ ականատես ենք իրական կերպարների. սիրահար պատանու ընկեր տղերքը սեզոտ մարգագետնին ուրախ սեղան են բացել, հուրհրում է կարմիր գինին, սարնիվեր հնչում է դհոլի ու զուռնայի ձայնը: Քեֆ անող երիտասարդների մեջ էլ հայտնվում է կտրիճ պատանին, որը զուռնայի՝ սիրո ու կյանքի կոչող նվագից խենթացած, սկսում է իր պարը: Արքշիռ պարի, դհոլ-զուռնայի, հոգին թինդ հանող ձայնին ականջալուր՝ հեղինակը պատկերում է վշտաբեկ հոգով, անպատասխան սիրուց հոշոտվող, ցավ ապրող մի այլ սիրահարի: Յոթ տարի է ինձ սիրած աղջիկը նրան սև դարդի մեջ է թողել: Տեքստի մեկնությունից պարզվում է, որ սիրուց մերժված հերոսը հենց ինքը՝ բանաստեղծն է և նրա սերը Շուշիկի հանդեպ: «Ալագյազի մանիները» նվիրված է Զարոյին, և թվում է՝ Զարոն գրողի չգիտակցված սիրո մարմնավորումն է, և այս առումով էլ պոեմն իր «քայլող սիրուն»՝ Շուշիկին է վերաբերում: Ողջ կյանքում բանաստեղծը իր հոգում կրել է անպատասխան սիրո մորմոքի զգացումը, և այս առումով էլ պոեմում Ավ. Իսահակյանը մեկն է մերժված սիրո համաշխարհային ողբասացներից: «Տղայի երգից» հետո հեղինակը պատկերում է Վարդավառի տոնախմբության մանրամասները. Վարդավառը հայոց հին հեթանոս

«Как пери спящая мила

Она в гробу своем лежала» (նույն տեղում, էջ 555):

[12] **Лермонтов М.Ю.**, նշվ. աշխ., էջ 558:

ջրապաշտությունն է՝ «Անահիտի՝ ջուրերու գեղուհին ի հիշատակ», երբ ջուր են սրսկում ժողովրդի վրա, Աստղիկի հիշատակին աղավնիներ թռցնում և վարդեր սփռում: Գուցե և՛ ջուր սրսկելը, և՛ աղավնիներ թռցնելը արձագանք է ջրհեղեղին և նույյան աղավնուն. «Հայոց Նավասարդն է Վարդավառը, որ նոյյան ջրհեղեղի հիշատակը կկատարեն՝ ջրելով իրար[13]: «Ալագյազի մանիներում» եթե «Տղայի տաղը» մերժված սիրո արցունք է, մինչև երկինք առաքվող տանջանք ու հառաչանք, ապա աղջիկների երգը սիրո կանչ է՝ երազների ասպետ «Էն տղին ուղղված», սիրո սպասում: Մեկ տարի իր երազների երկրագույն սիրակարոտ աղջկա հոգին ու մարմինը, որպես զմրուխտ թռչուն, թևածում են դեպի սիրած էակը: «Աղջիկների երգը» հատվածում երազային սերը գովերգելուց հետո հեղինակի ուշադրությունը շեղվում է դեպի ռեալ իրականություն՝ Վարդավառի տոնակատարությունից դեպի վանք, վանքի բակը, ուր միացել է կույր աշուղը միացել ցնծացող երիտասարդներին: Երազային սիրո հեքիաթին զուգահեռ հնչում է աշուղի զրույցը՝ դժբախտ սիրահարների մասին: Ավանդական մի զրույց է սա. գեղեցկուհի մի աղջկա՝ բերդի տիրուհու հմայքով գերված բազմաթիվ ասպետներ բռնել են բերդի ճանապարհը՝ նրա սրտին տիրանալու համար: Սակայն նա, ավա՜ղ, նրանց անսահման սիրուց ձանձրացած ու հոգնած, երես է դարձել բոլորից: Իսկ վերջին ասպետը, որն արդեն ծանոթ էր կանացի քմահաճույքներին, չի խոնարհվում նրան և աղջկա հպարտ գեղեցկության հանդեպ անտարբեր մնալով՝ նա նվաճում է դիցուհու սերը.

Աղջիկը նրան ձայն տվեց,
Կանչեց, լացեց, որ ետ գար.
Ու երբ չեկավ, խելագար՝
Բուրգեն իրան վար նետեց /II,41/:

Աշուղի դժբախտ սիրո պատմությանն ունկնդրելուց հետո Վարդավառի քեֆ-ուրախությունը, սակայն, շարունակվում է. կյանք տեսած, սիրո դառնությունը ճանաչած կույր աշուղի հողեղեն, երկրային զրույցը չի սթափեցնում խենթ սիրո շուրջպար բռնած աղջիկներին և պատանիներին: Պարերգի յուրաքանչյուր հեղինակ՝ տղա թե աղջիկ, իրենց սիրո մենախոսությամբ են ներկայանում՝ ամեն վայրկյան պատրաստ այն երկխոսության վերածելու: Սիրո երկխոսությանն էլ սկզբից մինչև վերջ մասնակցում է ազգային հենք պա-

[13] **Պօղոսեան Յ.,** Ներածութիւն հայ հոգեբանութեան, Գահիրէ, 1958, էջ 79:

րերգն արժեվորող, տրամադրությունն առավել բորբոքող խումբը: Աղջիկներն ու տղաները, արբած սիրո գինուց, գովերգում են սիրո աստվածուհու՝ Աստղիկի տոնը՝ սիրո և որդեծնության արարումով: Չնայած ֆաբուլաների տարբերությանը, թվում է՝ պոեմի այս հատվածը հարազատություն ունի Հովհ. Թումանյանի «Անուշի հետ»: Անուշի դժբախտ սիրո ողբ ու կոծին ձայնակցում է աղջիկների ողջ խումբը և փորձում ամոքել նրա անսփոփ վիշտը («Մի՛ տրտմի՛ր, Անո՛ւշ… Մեր ձեռքով հանած մի անմիտ վիճակ…Սուտ բան է, քուրի՛կ, դու մի՛ հավատար, լոկ պատահական մի չար խոսք է սա»[14], իսկ «Ալագյազի մանիներում» կույր աշուղն է միայն ռեալ ու սթափ գնահատում իրողությունը: Ջահելները, սակայն, նրան չեն լսում, իրենց սերն են գովերգում, աստղից աստղ թռչում և սիրո ինքնամոռացությամբ արբեցած՝ քուն մտնում աստղերի մեջ: Հովհ. Թումանյանի մոտ, սակայն, հրճվանք-ուրախությունը ընդհատվում է, և ասես Անուշի դժբախտությունը զգալով՝ նրանք վերադառնում են իրականություն: Պոեմի «Ե երգում» հեղինակը շարունակում է աշուղի երգի տրամադրության ոգով, և այս են հավաստում բանաստեղծական պատկերները՝ արնոտ սրտի մորմոք, բլբուլի խոցված սիրտ և որպես դժբախտ սիրո վկայություն՝ երկնքից ընկած պայծառ աստղ, որը ոչ միայն պոեմի հերոսի, այլև ընդհանրապես փշրված սիրո խորհրդանիշ է: Այսօրինակ զգացումով էլ պատանին կանգնում է սիրած աղջկա դռան առջև: Չկար սիրած էակը, որին նա որպես ընծա բերել էր իր սիրատոչոր սիրտը: Աղջկա բացակայությունն անսփոփ մորմոքի տրամադրությամբ է համակում նրա հոգին: Պատանին երազի մեջ էլ չի կարողանում իր կարոտն առնել, քանի որ նրա հոգում տագնապ ու վիշտ էր ծնել նաև գիշերվա տեսած երազը: Այն չարագուշակ էր և գուժում էր սիրո ավարտը, սիրած աղջկա դավաճանության լուրը, քանի որ իր «քայլող սերը» այլ երիտասարդի հետ էր կապույտ լճակի վրա ոսկե նավակով զբոսնում.

Յարիս նրա գրկո՛ւմ տեսա
Համբույր կուտար ու կառներ,
Ա՜խ, ինձ ափին մեռած տեսա՝
Ուռին վրաս լուռ կուլար…/II, 42/:

Հայտնի է, որ Ավ. Իսահակյանի մեծ սերը դառնում է սիրած էակի հարազատների նյութապաշտության հակումների զոհը, և գրողի օրագրային էջե-

[14] **Թումանյան Հով.,** Երկեր երկու հատորով, հ. 2, Ե., 1958, էջ 54:

րի վկայությամբ՝ տասնամյակներ անց անգամ նա այն վերապրում է իբրև հոշոտող ցավ և ողբերգություն՝ «…տիեզերքի խորություն ուներ իմ սերը…» (Հ, 284): Որպես իրողության բացատրություն՝ թերևս տեղին է Ա. Լոսևի պնդումը, որի համաձայն «Անտիկ զգայական, նյութական տիեզերքը…պահանջում էր գաղափարի հավերժ վերադարձ…այդ ժամանակներում հրաժարվում էին չարի վերջնական բացատրությունից՝ ամեն ինչ հանգեցնելով ճակատագրին»[15]: Այս բանաստեղծությունը («Ե երգ, III») հուշում է հեղինակի դժբախտ սիրո ավարտը, որը պոեմում մինչ այդ նկարագրվածների մեջ ամենաողբերգականն էր: Սիրած յարին ուրիշի գրկում տեսնելու վշտին չդիմանալով՝ նա իրեն մեռած է տեսնում. հոգեբանական վիճակ, որը երկար տարիներ ունեցել է ինքը՝ բանաստեղծը: Չդիմանալով սիրած աղջկա դավաճանությանը՝ Զարոյի հոյիկի դռնից հեռանալուց առաջ, բանաստեղծն իր կյանքն արդեն համարում է անմիտ և ունայն.

Գերեզմանս գեթ փորեիր
… Քու ձեռքերով ինձ թաղեիր
… Նոր երթայի՛ր, է՜յ, անգութ…(II,51):

Համոզված, որ սիրուց ավելի մնայուն արժեք գոյություն չունի, կյանքից հիասթափված ու տառապած պատանին վերադառնում է մոր գիրկը՝ նրա սերն իմաստավորելով որպես բնության շքեղաշուք պարգև: Աշխարհից դառնացած ու խոցոտված որդու հոգին միայն մայրն է ի զորու սփոփել և ամոքել.

– Ազիզ մերի՛կ, դուռը բա՛ց,
Քու որդին եմ, խոցված կուգամ,
Անո՛ւշ մերի՛կ, գիրկդ բա՛ց…/II,52/:

«Ալագյազի մանիներ» պոեմը այս առումով էլ մայրական սիրո յուրօրինակ ձոն-փառաբանություն է՝ սիրո, և անձնազոհ նվիրվածության ալեբախումներով:

[15] **Лосев А.Ф.** История античной философии, М., 1989, с. 16, 29.

THE POEM "ALAGYAZ MANIS" BY AV. ISAHAKYAN

ZAKARYAN M.

Summary

According to the testimony of the "Diaries" of Avetiq Isahakyan the origin of the poem "Alagyaz manies" goes back not only to the Armenian folklore (mani, yayli) but also to the unreleased work "Uri-Peri" (fairy) written in the early years wich the poet compares with the poems "Lala-Hands" by Th. Moore and "Demon" by M. Lermontov. In the poem "Alagyaz manis" Av. Isahakyan manages the psychology of love and the writer, resortinga to the help of a number of legends, analyzes the feelling of grief and suffering of heroes because of rejected feeling. A hero who experienced unrequited love finds solace in his mother in his tragedy and in this aspect it seems that the poem is a work devoted to maternal love.

ПОЭМА АВ. ИСААКЯНА «АЛАГЯЗСКИЕ МАНИ»

ЗАКАРЯН М.

Резюме

Согласно «Дневникам» Ав. Исаакяна, истоки поэмы «Алагязские мани» восходят не только к армянскому фольклору («мани», «йайли»), но и к написанному им в ранний период творчества неизданному произведению «Ури-пери» («Фея»), которое сам поэт сопоставлял с поэмами «Лала-Рук» Т. Мура и «Демон» М. Лермонтова. Главной темой поэмы Ав. Исаакяна «Алагязские мани» является отвергнутая любовь как источник страданий героев. Герой, переживший неразделенную любовь, находит утешение в материнской любви. Исходя из сказанного, поэма является также посвящением жертвенной и всеобъемлющей материнской любви.

КАВКАЗСКАЯ ОДИССЕЯ ИСПАНСКОГО РЕВОЛЮЦИОНЕРА ХУАНА ВАН ГАЛЕНА

АРАМЯН А.

Мемуары испанского революционера Хуана Ван Галена, служившего на Кавказе в 1819–1820 гг., были многократно изданы на испанском. Еще французском и английском языках, в русской печати они появились в сокращенном переводе Н.А. Белозерской[1].

Бельгиец по отцу, Хуан Ван Гален родился в 1790 г. в Испании. После окончания морского училища поступил на службу в испанский флот. Еще юношей он примкнул к герильясам, сражавшимся против вторгшихся в Испанию наполеоновских войск, участвовал в обороне Мадрида. В 1813 г. он поступил на службу в каталонскую армию. Возвращение на престол Фердинанда VII, восстановление инквизиции, увеличение расходов двора вызвало в стране общественное недовольство, появились тайные общества.

Ван Гален стал одной из первых жертв деспотизма: его в декабре 1815 г. арестовали по доносу одного из мнимых друзей, выдавшего участие Ван Галена в подготовке восстания в Каталонии. Он был брошен в тюрьму, смог добиться аудиенции у короля, но безуспешно, так как не выдал своих друзей, за что был предан инквизиционному суду, который вынес решение подвергнуть его мучительными пыткам.

Прошло много времени, прежде чем Ван Гален поправился и предпринял попытку бежать из заточения, в чем ему помогли приемная дочь тюремщика, а также его смелость и находчивость.

Друзья снабдили его фальшивым паспортом, предоставили жилье, где он оставался до полного восстановления сил. В июне 1818 г. он прибыл в Англию.

Оказавшись без всяких средств к существованию, Ван Гален решил поступить на военную службу в такой стране, интересы которой не могли

[1] **Записки Ван Галена** (Исторический вестник, 1884, № 5–6).

бы столкнуться с интересами Испании. Такой страной представлялась ему далекая Россия. В Лондоне, через секретаря русского посольства Д.Н. Блудова, принявшего близкое участие в судьбе испанского эмигранта, Ван Гален получил паспорт для поездки в Петербург, а также рекомендательные письма к влиятельным лицам в столице.

В результате знакомства с петербургским светским обществом вокруг Ван Галена образовался ближний круг лиц, с симпатией и пониманием оценивших его положение и протянувших руку помощи. Это были князья Голицыны, братья Тургеневы, испанец, генерал А. Бетанкур, управляющий путями сообщения в России, проникшийся особым сочувствием к опальному соотечественнику и др.

Рассказывая о дружеской поддержке новых знакомцев, Ван Гален, видимо из соображений конспирации, ничего не сообщает о своих беседах по поводу испанских событий, которые, полагаем, должны были иметь место, в частности, в общении с Н.И. Тургеневым, в своих дневниковых записях приветствовавшим испанскую революцию и считавшим республиканское правление идеалом всего человечества. Несомненно, дружески-доверительное общение могло быть и с князем М.Ф. Голицыным, который впоследствии, после подавления восстания декабристов, в числе других подозреваемых был привлечен «по делу о злоумышленном обществе».

После ряда неудачных попыток поступить на военную службу друзья посоветовали Ван Галену подать прошение о принятии в кавказскую армию, где генерал Ермолов пользовался уважением не только со стороны русских офицеров и солдат, но и покоренных народов. Наконец, 16 мая 1819 г. Ван Гален получил приказ о зачислении в чине майора в 44-ый Нижегородский драгунский полк.

Встреча с А.П. Ермоловым, знакомство с его подчиненными укрепили в сознании Ван Галена представление о генерале как об особенной личности. Будучи высокопрофессиональным военным и человеком редкого обаяния и эрудиции, он создал на Кавказе «особого характера человеческий коллектив» – содружество военных, где главным мерилом в оценке человека были личная ценность человека, присущие ему качества, а не знатное происхождение и связи.

Постепенно из бесед с офицерами полка Ван Гален составил представление о войне с горцами, узнал быт военных, от сподвижников Ермолова услышал много рассказов о нем. Генерал старался упорядочить жизнь и быт местного населения, как отмечает Ван Гален, «благодаря знанию характера и национальных особенностей народов, Ермолов стремился дать каждой нации возможность заниматься своим делом: создал условия, чтоб армяне могли беспрепятственно заниматься торговлей, так как они преуспевали на этом поприще, учитывая честолюбие грузин, привлек их в свою армию»[2].

По поручению Ермолова Ван Гален отвез в Тифлис генералу Вельяминову депеши и вынужден был задержаться в городе на два месяца, заболев лихорадкой. Не оправившись от болезни, страшно похудевший, он решил вернуться в полк.

В Караагаче, где был расквартирован на зиму Нижегородский полк, его радушно приняли, предоставив жилье и двух денщиков. Однако, несмотря на известные удобства, зимовка в горах показалась ему ссылкой, бездействие, однообразный распорядок жизни сильно тяготили его. Он попросил Ермолова направить его в одну из экспедиций против горцев и получил назначение в штаб генерала Мадатова. Оставшись в Тифлисе, Ван Гален имел возможность довольно подробно ознакомиться с городом.

Тифлис, являясь резиденцией главнокомандующего, выполнял роль административного центра края. Как отмечает Ван Гален, «в новой части Тифлиса было несколько общественных зданий, предназначенных для главнокомандующего и офицеров штаба, князя Мадатова, а также дома других дворян и богатых армян»[3].

Упоминание армян как привилегированных жителей Тифлиса неслучайно. Известно, что армяне издавна жили в Тифлисе. По данным Александра Негри, советника при штабе А.П. Ермолова, в 1817 г. в Тифлисе

---

[2] **Memoirs of Don Juan Van Halen,** vol. II, London, 1830, p. 209. Далее – Memoirs.

[3] Там же, с. 231.

насчитывалось 2000 домов или более 20000 жителей, из них армянам принадлежало 1800–1850 домов, где проживало 16000–17000 чел.[4].

Численное превосходство армян, активное участие армянского торгового капитала в жизни города способствовали тому, что «в новые времена, находясь под властью русских, Тифлис предоставил армянам условия экономического и духовного процветания, развития торговли и промышленности, обеспечил права личности и неприкосновенность имущества, чего они были лишены под властью персидской и турецкой тирании»[5]. В Тифлисе проживали влиятельные армянские землевладельцы, князья Аргутинские, Бебутовы, Коргановы и др.

В штабе Мадатова Ван Гален приобрел много новых друзей, среди них – сын популярного беллетриста, полковник М. Коцебу, будущий декабрист А. Якубович, Василий (Барсег) Бебутов, принадлежавший к известному княжескому роду, получивший военное образование в Санкт-Петербургском кадетском корпусе, барон Ренненкампф, князь Орбелианов, племянник генерала Вельяминова и др.

В своем капитальном исследовании «Грибоедов и декабристы» М.В. Нечкина подробно прокомментировала пребывание Ван Галена на Кавказе, представив его окружение, где в числе сослуживцев был назван и полковник Давид Бебутов, служивший в Малороссии. М.В. Нечкина сообщает: «Позже Бебутов служил в ермоловском корпусе в Нижегородском полку и также дружил с испанским революционером Ван Галеном, служившим там же»[6]. Однако данное утверждение М.В. Нечкиной кажется нам несостоятельным, ибо в «Мемуарах» Ван Галена часто фигурирует Василий Бебутов, старший брат Давида. Служба в штабе Мадатова сблизила Ван Галена с В. Бебутовым, которого он неоднократно упоминает в своих воспоминаниях.

По нашему мнению, досадная оплошность М.В. Нечкиной, объединившей братьев Бебутовых и приписавшей Давиду службу с Ван Галеном,

---

[4] **Հակոբյան Պ.Հ.,** Խաչատուր Աբովյան, Ե., 1967, էջ 159:

[5] Там же, с. 159–160.

[6] **Нечкина М.В.,** Грибоедов и декабристы, М., 1977, с. 234.

– это частный случай, не влияющий на исключительную ценность работы автора. Полагаем, что приведенные нами факты снимают вопрос о знакомстве и дружбе Д. Бебутова с Ван Галеном и службе с ним в Нижегородском полку, что же касается дальнейшей судьбы Д. Бебутова, известно, что в связи с русско-персидской войной он подал прошение о переводе в Отдельный кавказский корпус, получив назначение в Нижегородский полк (1828)[7], однако это был уже не ермоловский корпус, так как генерал был отправлен в отставку, а Ван Гален в 1820 г. покинул Россию.

Исключительный дух военного братства, выпестованный А.П. Ермоловым, привлекал особый интерес испанского революционера, встретившего на Кавказе добрый прием и нашедшего истинных друзей в штабе генерала Мадатова.

Попав в отряд Мадатова, Ван Гален имел возможность сблизи узнать и оценить эту яркую, неординарную личность. Он пишет: «Мадатов, уроженец Карабаха, поступил на службу к русским очень молодым, участвовал в кампании против Наполеона, потом служил в Грузии под началом генерала Ермолова. Его знание языков и обычаев страны, воинственный характер, дворянское честолюбие вместе с красивой внешностью и изысканными европейскими манерами создали ему большую популярность»[8]. Интересные факты из «прошлой» жизни Мадатова сообщает Раффи. Когда карабахские мелики Фрейдун Мелик-Бегларян и Джумшуд Мелик-Шахназарян отправились в Санкт-Петербург на встречу с императором Павлом I, в их свите находился и юный Ростом – сын погонщика мулов мелика Шахназара... «Еще в 14-летнем возрасте Ростом, удрав из Карабаха в Астрахань, стал там учеником у полкового маркитанта. Это занятие позволило ему изучить русский язык. Когда мелики, по пути в Санкт-Петербург, проезжали через Астрахань, Ростом затесался в их довольно многочисленную свиту. Его взяли с собой, полагая, что он пригодится в пути в качестве переводчика. Санкт-Петербург так увлек юношу, что он решил остаться здесь. Мелик Джумшуд выдал сыну погонщика мулов своего отца грамоту

[7] Генерал-лейтенант Давид Осипович Бебутов. СПб., 1867, с. 44.

[8] **Memoirs,** с. 234.

о дворянском происхождении, и по его просьбе Ростома зачислили в военную школу. Этот юноша впоследствии стал знаменитым князем Мадатовым, который прославился во время турецкой, французской и персидской кампаний»[9].

Участие Ван Галена в экспедиционной поездке отряда Мадатова на его родину, в Карабах, позволило испанцу увидеть этот край, оценить встреченные в пути достопримечательности: так пытливый взгляд иностранца, проезжавшего кирпичный мост с пятью арками, проложенный через Храми, приток Куры, привлекают руины старого моста с несколькими башнями, что позволило ему сделать вывод о том, что «в древние времена здесь располагался богатый город, так как мост находился на перекрестке дорог из Елизаветполя, Еревана, Каракилиса и Гюмри»[10]. Действительно, на этом месте в древности был мост, который со временем разрушился. В XVII в. был построен новый, Красный мост, названный так из-за красного цвета кирпича.

Панорама Шамхора навеяла Ван Галену воспоминания о родине: «Равнины Шамхора чрезвычайно похожи на равнины провинции Ла-Манчи: ни там, ни здесь не было ни единого дерева»[11]. От Гянджи в Карабах вели две дороги, как замечает автор, одна более благоустроенная (125 верст) и другая, которая сокращала путь вдвое: «Все мои друзья избрали вторую дорогу, но так как мое здоровье не позволяло ехать с ними, я поехал по длинной дороге в сопровождении моего слуги и двух казаков. Дорожная тишина нарушалась лишь монотонною песней грузин, которая днем и ночью звучала в ушах»[12].

Недалеко от Шуши, возле водопада к ним пристал нищий, который сопровождал их до города, пока не получил денег: «Позже князь Мадатов объяснил, что такого типа бродяги, приставая к караванам и представляя себя их защитниками, доходят до самой Индии»[13], - замечает Ван Гален.

[9] **Раффи,** Меликства Хамсы, Е., 1991, с. 124.

[10] **Memoirs,** с. 238.

[11] Там же, с. 240.

[12] Там же, с. 245.

[13] Там же, с. 248.

Тягостное впечатление оставило на него посещение Шуши: «Улицы Шуши были в сплошной грязи из-за постоянных дождей. Я никогда не видел таких убогих домов... Мадатов израсходовал огромную сумму на строительство среди этих хижин своего великолепного, в европейском стиле, дома»[14], нотки осуждения слышатся в этих словах республиканца Ван Галена.

Не ускользнула от его внимания и относительная благоустроенность Нухи, «среди жителей которой преобладали армяне, основавшие производство шелка, что способствовало процветанию провинции»[15]. Мадатов представил Ван Галена карабахскому хану, который с большими почестями принял их в своем дворце, продемонстрировав гостеприимство и уважение к гостям.

Мадатов, будучи командующим войсками Карабахской области, а затем военно-окружным начальником Карабаха, Ширвана и Шеки, бесспорно был наделен широкими полномочиями и, как пишет Раффи, получил от Мехти-хана дарственную на владение бывшими владениями Шахназарянов. Позднее, после отставки А.П. Ермолова (1827), как вспоминал Д. Давыдов, Паскевич, недовольный блестящими военными победами Мадатова, «очернил его в глазах государя. Мадатова, обвиненного в грабительстве, лишили владений, пожалованных ему Мехти-Кули-ханом по ходатайству Ермолова, имевшего в виду приучить кавказских владетелей жаловать землями храбрых русских генералов, на что император Александр изъявил свое согласие»[16].

Действительно, в высочайшем рескрипте на имя Ермолова Александр I дал согласие на предоставление Мадатову предлагаемого ему имения в Карабахе[17]. Мы не располагаем дополнительными сведениями, мотивировавшими временное отстранение Мадатова от дел, но нельзя не согласиться, что Паскевич, благодаря близости к Николаю I, мог сыграть роковую роль в судьбе генерала.

---

[14] Там же, с. 249.

[15] Там же, с. 261.

[16] **Денис Давыдов.** Сочинения, М., 1962, с. 505.

[17] Жизнь генерал-лейтенанта князя Мадатова, СПб., 1863, с. 222–223.

Однако вернемся к лету 1820 г., когда Ван Гален в составе мадатовского отряда участвовал в карабахской экспедиции. Для испанца это была ознакомительная поездка, мирный вояж, позволивший ему увидеть край и поближе познакомиться с Мадатовым. Ему было приятно общение с веселым, остроумным генералом. Как замечает испанец, Мадатов, зная о перенесенной им лихорадке, интересовался его здоровьем, несомненно, в поездке у них было много возможностей для близкого общения, что способствовало большей доверительности в их отношениях.

Вскоре Мадатов получил приказ Ермолова прибыть в Дагестан для усмирения известного своей жестокостью Сурхай-хана, подстрекавшего других ханов к выступлению против русских. Ван Гален был счастлив наконец-таки принять участие в этом походе, что, как он полагал, давало ему возможность лучше познакомиться с различными народами Кавказа и удобный случай отличиться в бою.

Все перипетии этого выдающегося похода Мадатова известны нам благодаря мемуарам Ван Галена. Кратчайшим, но чрезвычайно трудным оказался путь отряда Мадатова от Ширвана в южный Дагестан. Ван Гален рассказывает: «При переходе через Кавказский хребет, на самой высокой точке пути, когда мы думали, что все препятствия уже позади, перед нами открылась огромная пропасть шириной 40 футов и более 3000 футов глубины, через которую был переброшен шаткий, из трех бревен, покрытых ветвями, мост без перил шириной в три фута. Князь Мадатов, который на своей маленькой лошадке всегда ехал впереди, доехав до моста, не колеблясь, проехал через мост. Пример, которому мы должны были последовать, если не хотели оказаться в глупом положении. Однако невозможно описать чувства, которые мы пережили, проходя через эту страшную бездну. Когда вся группа благополучно прошла через мост, один из наших офицеров спросил Мадатова: «Как называется этот мост?», на что генерал ответил: «Самое подходящее, что я могу придумать, – это Вельзевулский [чертов – А.А.] мост»[18].

[18] **Memoirs,** с. 278.

По дороге в Казикумык, у Хозрека, на неприступной и хорошо укрепленной позиции их ждал неприятель, Сурхай-хан, собравший огромное ополчение в 20.000 человек. По словам автора, у князя Мадатова не было никаких данных, чтоб составить предварительный план действий: «О карте не могло быть и речи, никто из туземцев, находившихся в русском отряде, не бывал в Хозреке, так что сведения ограничивались сбивчивыми... показаниями местных татар»[19]. Мадатову пришлось на месте ознакомиться с обстановкой: изучив расположение сил противостоящих горцев, он выработал свой блестящий план действий, ознаменовавшийся безоговорочной победой. Подробности сражения описаны в «Мемуарах»: Ван Галену удалось представить батальные действия на фоне живописных гор Кавказа, дать яркие зарисовки ханов, сражавшихся на стороне русских, не обошел он вниманием и «отдельные сцены свирепости азиатов», бегство Сурхай-хана и т.п. «На расстоянии шести верст земля была усеяна телами убитых, 600 человек взяты в плен. Трофеями победы были весь лагерь и богатая ставка Сурхая...»[20], – таков был итог сражения.

Выдающийся военный историк, начальник генштаба Кавказской армии Василий Потто (1836–1911) писал о казикумыкской экспедиции В.Г. Мадатова: «Знаменитый поход этот нашел в лице иностранца Ван Галена любопытного наблюдателя. В военной истории найдется немного горных походов, которые по трудностям могли бы равняться с мадатовским, а между тем многим ли из нас, русских, известен этот поход даже по названию?»[21].

За взятие Хозрека Якубович и Ван Гален были представлены к высокой награде – ордену святого Владимира. Несомненно, участие испанского революционера в экспедиции Мадатова в Казикумык следует отнести к самому яркому событию его жизни на Кавказе. Созданная им панорама военных действий отряда Мадатова примечательна не только описанием батальных сцен, за всем этим вырисовывается яркая мужественная лич-

[19] **Записки Ван Галена,** с. 667–668.

[20] Там же, с. 669.

[21] **Потто В.** Кавказская война в отдельных очерках, эпизодах, легендах и биографиях, т. II, СПб., 1886, с. 298.

ность самого генерала, чья доблесть и бесстрашие служили отличным стимулом для воинов. От его внимания ничего не могло ускользнуть, он дорожил жизнью своих офицеров и солдат, всеми силами стараясь защитить, уберечь их. Так, Ван Гален отмечает: «Почувствовав, что мы в опасности, главнокомандующий прислал к нам князя Бебутова, чтоб мы не спешили с атакой, пока не подоспеет помощь»[22].

Симпатией к храброму генералу проникнуты строки Ван Галена: «Мадатов, как всегда спокойный и веселый, ехал впереди и сам руководил атакой, появляясь в самых горячих точках. Напрасно окружающие просили его отъехать, чтобы не подвергаться опасности: «А если я уеду, то кто же возьмет Хозрек?» – возразил он, обращаясь к офицерам. «Мы возьмем его, ваше сиятельство!» – ответил за всех подполковник Сагинов и с батальоном Апшеронского полка кинулся на приступ. Он и майор Ван Гален первыми взошли на городскую стену, и оба были ранены»[23].

После победы Мадатов преображается, приобретая в глазах испанца новые качества... Ван Гален отмечает прекрасное знание им языков, обычаев и национальных традиций народов Кавказа, тонкое дипломатическое маневрирование, умение хитро использовать внутриплеменные трения и разногласия для завоевания народов Кавказа и их вхождения в состав России. Вместе с тем Мадатов, хорошо знавший народную психологию, как победитель мог позволить такое проявление акта доброй воли, которое обращало его врагов в друзей. Так, по свидетельству Ван Галена, после победы Мадатов вывел войска из Хозрека и расположился под городскими стенами, пленные были отпущены на свободу – это было великодушие победителя. Жители Хозрека стали выходить из укрытий, они приходили в лагерь, где Мадатов приветливо принимал их, разъясняя, что русские воюют не с ними, а с их вероломным ханом и т.п. Во время приведения к присяге Аслан-хана Мадатов, как отмечает Ван Гален, не считая приличным присутствовать на церемонии, оставался с офицерами в своей па-

[22] **Memoirs,** с. 306.
[23] Там же, с. 317.

латке, – эти факты свидетельствуют о продуманных действиях генерала, стремящегося расположить к России завоеванные народы Кавказа.

Преданность и самоотверженная отвага Мадатова всегда находили у Ермолова благодарный отклик: «Если бы мог я столько положиться на каждого из моих товарищей, то не столько было бы мне трудно, ибо ты не менее каждого делаешь по должности и немало еще сделаешь по дружбе ко мне и давней свычке...»[24], – писал он Мадатову.

После Казикумыка блестящими победами ознаменовалось участие Мадатова во взятии Шамхора, Елизаветполя, Шуши. Х. Абовян писал о славных подвигах генерала: «Кто в то время видел деяния Мадатова, либо слышал о них, тот поймет, почему имя его осталось на устах и у армянина, и у тюрка, и у перса. Мир может перевернуться, а память о нем останется неизгладимой в нашем народе и нашей стране»[25].

В последний раз Мадатову посчастливилось проявить свое беспримерное мужество в русско-турецкой войне, одержав на Балканах две блестящие победы – около Правод и под Шумлою... Вскоре он скончался в лагере под Шумлою (1829).

Весть о смерти Мадатова дошла до Ван Галена и нашла глубокий отклик в его душе. С чувством сожаления и скорби он писал: «Мадатов еще долго мог бы служить России, если бы преждевременной не стал жертвой азиатов»[26].

В память о выдающемся полководце в 1837 г. был выпущен сборник «Жизнь генерал-лейтенанта князя Мадатова», который с дополнениями был переиздан в 1863 г. под редакцией М.Е. Коцебу, служившего в штабе Мадатова во время дагестанских походов 1819–1820 гг., А.С. Хомякова и И.М. Бакунина, состоявших адъютантами генерала Мадатова во время русско-турецкой войны 1828–1829 г. Перу А.С. Хомякова (1804–1860), поэта, публициста, известного общественного деятеля принадлежит блестящая характеристика Мадатова, где, в частности, сказано: «Природа

[24] Жизнь генерал-лейтенанта князя Мадатова, с. 214.

[25] **Абовян Х.,** Раны Армении, М., 1978, с. 274.

[26] **Memoirs,** с. 234.

